Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՍԱՊԱՏԿԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ

ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ԵՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru


www.freebooks.do.am
www.freebooks.am
panarmenian
freebooks
library

ՀԱՅ
ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985



Վերջին ուխտ





ԳՄԴ 84Հ1
Ն 631

Աշխատասիրությամբ
Ա. ԴՈՂՈՒԽԱՆՅԱՆԻ

Ներսես Մոկացի

Ն631 Բանաստեղծություններ (աշխատասիրությամբ Ս. Դողուխանյանի.— Ե.: Սովետ գրող, 1985.— 168 էջ.— («Հայ քնարերգություն» մատենաշար)

Ժողովածուն ընդգրկում է 16-րդ դարի վերջի և 17-րդ դարի առաջին քառորդի հայ միջնադարյան գրականության աչքի ընկնող ներկայացուցիչներից մեկի Ներսես Մոկացու բանաստեղծությունները

Իբրև հավելված ներկայացված են Սարգիս Քլիսնցու ոտանավոր գովասանությունը ընծայված «Լիմ անապատին» և «Վի ճաբանութիւն երկնի և երկրի» տաղի ժողովրդական տարբերակները

Ն 4702080100
———————85 (S)
705 (01) 85

ԳՄԴ 84Ն1

© «Սովետական գրող» հրատարակչություն կազմելու, առաջաբանի բառարանի համար, 1985

ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑԻ

16 րդ դարի վերջի և 17 րդ դարի առաջին քառորդի նշանավոր գործիչ Ներսես Մոկացին ծնվել է պատմական Հայաստանի Մոկք գավառի Ասկնջավս գյուղում (ունեցել է նաև Վանեցի և Բեղլու անվանումները) Ստանալով խոր և հարուստ գիտելիքներ, Ներսես Մոկացին նվիրվում է վանական միաբանություններում ծավալվող կրթա-լուսավորչական աշխատանքի Նա երկար ժամանակ աշխատում է որպես մանկավարժ, հիմնում է անապատական միաբանություն Այս առումով նրա կյանքը կապված է եղել հատկապես Բաղեշի Ամրդոլու վանքի, Սյունյաց Մեծ անապատի և Լիմ կղզու միաբանության հետ Եղել է Լիմի միաբանության հիմնադիր առաջնորդը, այնտեղ էլ կնքել է մահկանացուն

Ներսես Մոկացու դիմապատկերի կարևոր ու բնորոշ գիծը նաև այն է, որ եղել է իր ժամանակի փիլիսոփայական մտքի նշանավոր ներկայացուցիչը 5 րդ դարում ակսված ու արմատական հիմքերի վրա դրված ինքնուրույն ազգային փիլիսոփայական երկերի հարուստ ավանդները հետագա դարերում հետևողականորեն ու բազմակողմանիորեն զարգացան, հարստանալով թարգմանական ու ազգային նոր ստեղծագործություններով Սակայն 17 րդ դարի սկզբին, քաղաքական

անբարենպաստ պայմանների հետևանքով, այդ առաջ ընթացը մի կարճ ժամանակով ընդհատվեց. Փիլիսոփայական մտքի ավանդների յուրացման կարևորագույն գործը իր ձեռքը վերցրեց Բաղեշի Ամրդոլու դպրոցի հիմնադիր Բարսեղ Գավառացին, որը վերականգնեց հայոց դպրության հնամենի ավանդները, պատրաստեց բազմաթիվ աշակերտներ, որոնցից Ներսես Մոկացին փիլիսոփայության իմացությամբ գերազանցեց իր ուսուցչին և րնկերներին Ուշագրավ է, որ Բաղեշի դպրոցը Լեոն անվանում է «հայ ժողովրդի կուլտուրական հանճարի մի շատ թանկագին հուշարձան»[2] Ինչպես Բարսեղ Գավառացու, այնպես էլ Ներսես Մոկացու համար առաջնակարգ խնդիր էր աշակերտներին լրիվ հասանելի դարձնել հայ փիլիսոփաների, ինչպես նաև Արիստոտելի, Պլատոնի, Պորփյուրի, Փիլոն Ալեքսանդրացու և մյուս մեծերի աշխատությունները

16—17 րդ դարերում հայ գրականությունը զարգանում էր հիմնականում երկու ուղղությամբ մեկն աչքի էր ընկնում հին ավանդների հետևողական պահպանումով, իսկ մյուսը գրական նոր թեմաների ու նոր ձևերի որոնումով Ներսես Մոկացին պատկանում էր առաջին ուղղությանը Նրա ստեղծագործության մեջ արտացոլված էին ժամանակի համար առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրներ՝ հայրենիք, եկեղեցի, լուսավորություն Նրա ստեղծագործությունների ներքին ազդակը հայ ժողովրդի ծանր վիճակն էր. Հայաստանն ավերվում էր թուրքերի և պարսիկների միջև ծագած կործանարար պատերազմներից, որանց մշա-

---

[1] **Առաքել Դավրիժեցի,** Պատմութիւն Վաղարշապատ 1896 էջ 394

[2] **Լեո,** Երկեր, Գ, Երևան, 1969, էջ 270

կած պետական ու քաղաքական միջոցառումներից։ Պատմական հիշատակարանները ու մատենագրական աղբյուրներ զարհուրանքով են նկարագրում վրա հասնող այդ արհավիրքները, հատկապես Շահ Աբասի ձեռնարկած զանգվածային տեղահանումները ու բռնի արտագաղթը Արևելյան Հայաստանում։ Ներսես Մոկացու բանաստեղծությունններն այդ իրականության անմիջական արտահայտություններն են։

Նրա պատմական բովանդակություն ունեցող ստեղծագործությունները են «Օրհնեա՜լ տէր Յիսուս փրկիչ», «Ի հոլովել ժամանակին», «Հատդ անմահական», «Եկայք նորազուարճ մանկունք եկեղեցոյ»։ Սրանց մեջ պատմական առումով արժեքավորը «Օրհնեա՜լ տէր Յիսուս փրկիչ» տաղով սկսվող ներբողն է՝ նվիրված Սյունյաց Մեծ անապատի հիմնադրման ու նրա հիմնադիրներին։

Պատմական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ այս կարևոր միաբանության հիմնադրման գործում բացառիկ դեր խաղացին Սարգիս Սմբերդցին և Կիրակոս Տրապիզոնցին, ինչպես նաև Պողոս Մոկացի վարդապետը, որոնք Մելիք Հայկազնի օգնությամբ 17-րդ դարի սկզբին, Տաթևի մոտ, հիմնեցին Սյունյաց Մեծ անապատը։ Ահա այս չորս նշանավոր անձանց և հայ կյանքի համար այնքան նշանակալից մի երևույթի է նվիրել Ներսես Մոկացին իր վերոհիշյալ ներբողը։ Լեոն, բարձր գնահատելով այս ներբողը, նկատում է. «Հեղինակը երևան է հանում խոր ծանոթություն հայոց հին գրականության հետ և առհասարակ մի լավատեղյակ ու զարգացած մարդու տպավորություն է թողնում։ Նրա համառոտ աշխատության մեջ կան պատմական արժեքավոր նյութեր և, որոնք զանցառության են մատնը-

ված ուրիշ ժամանակագիրների կողմից»[1] Իսկ Ղևոնդ Ալի շանը գտնում է, որ այս ներբողը գրված է «լավագույն տա ղաչափությամբ և արժանի է գովության»[2]

«Օրհնե՞ալ տէր Յիսուս փրկիչ» ներբողն սկսվում է բա ցառիկ ուրախ տրամադրությամբ և հպարտությամբ Այս տեղ ակնարկված պանծալի անուններից առաջինը վերո հիշյալ Մելիք Հայկազն է՝ մի քաջարի զորական, որն օս մանցիների դեմ մղած բազմաթիվ ճակատամարտերից հաղ թանակով դուրս գալու համար ստացել էր հայրենի գավա ռի՝ Սյունիքի իշխանությունը Իր այս իշխանությունն էլ հայրենասեր իշխանը օգտագործել էր անապատի հիմնա դիրներին օգնություն ցույց տալու ժամանակ Մելիք Հայ կազնը ժողովրդի ազատագրման համար պայքարի ելած մարդու կերպար է Ինչո՞ւ մեր միջնադարյան գրականության մեջ կերտված հայրենասեր իրական պատմական հերոսնե րին: Այս ներբողը 17 րդ դարի կրթական կյանքի վերաբեր յոգման առաջին արտահայտությունն է

Ներսես Մոկացու պատմական թեմայով գրված ստեղ ծագործություններից մեկն է Անդրեաս քահանային նվիր ված գանձը Անդրեաս քահանան նահատակվել է 1617 ի նո յեմբերի 18 ին Գանձը գրվել է դեպքի թարմ ազդեցության տակ Նրանում կարճ և անպաճույճ տողերով ներկայաց վում են Անդրեաս քահանայի երիտասարդ կյանքի պատ մությունը և նահատակության մանրամասները Գանձում Անդրեասը հանդես է գալիս որպես հերոսական կերպար, որն իր մահով փրկում է շատերի կյանքը Նրա նահատա-

---

[1] **Լեո, Երկեր, Գ, Երևան, 1969, էջ 362**

[2] **Գ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901 էջ 618**

Կոլանը Ռուբեն Դավրիժեցին նվիրել է իր պատմության գլուխներից մեկը, որը և հիմք է դարձել Մուրացանի «Անդրեաս երեց» վիպակի համար: Ներսես Մոկացին Անդրեաս քահանայի հերոսությունը գեղարվեստորեն վեր կանգնող առաջին հեղինակն է:

Գանձերին հատուկ կանոնների համաձայն այն ավարտվում է հանգապատասխան տաղով «Եկայք նորազուարճ ժողովուրդ եկեղեցոյ» սկզբնատողով: Թե՛ գանձը և թե՛ տաղը խազավորված են, որը վկայում է Ներսես Մոկացու երաժշտական գիտելիքների մասին:

Ազգային թեմաներով գրված պատմական բնույթի ստեղծագործությունների մեջ ուրույն տեղ ունի «Ի հոլովել ժամանակին» տողով սկսվող ողբը՝ նվիրված Սալահադդինի կողմից 1187 թ. Երուսաղեմը գրավելու պատմությանը: «Ողբ վասն առմանն Երուսաղեմի» ստեղծագործությունը Ներսես Մոկացին գրել է իր եղբայրակիցների խնդրանքով: Այս ստեղծագործությունը ծայրեծայր ողբասացություն չէ, նրանում կան լուսավոր տրամադրությամբ գրված և ուրախ ոգի ունեցող հատվածներ.

Տօն ցնծութեան կատարէին,
Զուգն հին փարատէին
Եւ յետ աւուրց ինչ հանգստին
Վառեալ ի մարտ ընդ քաղաքին

Այսպիսի մասերը կապվում են խաչակրաց երրորդ արշավանքի և խաչակիրների հաջողությունների հետ: Բանաստեղծը իր հայրենիքի ազատագրման գաղափարը կապում է խաչակիրների հետ, հստակ չպատկերացնելով նրանցից սպասվող ազատության հնարավորությունը. նրա

ապագալիքները չունեն այն պաղծառությունը, ինչ տեսնում ենք Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմում: Խաչակիրներից ակնկալվող փրկության գաղափարն ավելի շուտ ավանդական սովորություն էր, քան՝ իրական հնարավորություն

Միջին դարերում, ինչպես նաև դրանից շատ առաջ, ընդհանուր մտածողության և ժողովրդական պատկերացումների մեջ իշխում էին «հոգու և մարմնի», «երկնքի և երկրի», «մարդու և բնության» փոխհարաբերության խրնդիրները Միջնադարն այդ խնդիրները դիտեց քրիստոնեության հիմնական գաղափարախոսության դիրքերից Այդ մտածողությունը բազմապիսի արտացոլումներ գտավ ինչպես փիլիսոփայության, աստվածաբանության, այնպես էլ գեղարվեստական գրականության մեջ

Հոգու և մարմնի փոխհարաբերության պատկերումը գեղարվեստական վերարտադրության նյութ է դարձել համարյա բոլոր ժողովուրդների մոտ Մեր միջնադարյան ամբողջ գրականության միջով հետևողականորեն անցավ այդ գաղափարը՝ Մեսրոպ Մաշտոցից մինչև Սայաթ Նովա Արդեն 10 րդ դարում, շնորհիվ Գրիգոր Նարեկացու, հոգու և մարմնի խնդիրը հասնում է կատարելության, դրսևորվում է այնպիսի լայնությամբ, խորությամբ և արվեստով, որպիսին չի տվել ժամանակի միջազգային գրականությունը

Հոգու և մարմնի խնդիրները գրականության մեջ երբեմն հանդես են գալիս որպես վիճաբանություն երկու հակոտնյա կողմերի միջև Այդօրինակ գործերից է Ներսես Մոկացու «Վիճաբանութիւն երկնի և երկրի» բանաստեղծությունը, ուր դրսևորված է այն համարձակ միտքը, թե աստ

ված չի կարող պահպանել երկնքի ու երկրի հավերժությու
ներ, եթե չլինի երկիրը

Հեղինակի եզրահանգումն իսկ բավական է, որ բա-
նաստեղծությունը դիտվի որպես իր ժամանակի առաջավոր մտքի ցայտուն արտացոլում Այս բանաստեղծությունը հոգու և մարմնի փոխհարաբերությունը դրսևորող լավա գույն ստեղծագործություններից Է, որի դիպուկ բնութագի-րը տվել է Մ Աբեղյանը Վերջինս միջնադարի հայ քնար երգության աշխարհիկանացումը դիտում է լինելիության պրոցեսում, որի ավարտում արտահայտություններից մեկը համարում է Ներսես Մոկացու «Վիճաբանութիւն երկնի և երկրի» տաղը Սրանով մեր քնարերգությունն արդեն կա-տարելապես իջնում է իրական աշխարհ «Դա վերջն էր եկեղեցական կրոնական ոգու և հայացքի»[1] Իրոք, այս տաղը որոշակիորեն բնորոշում է այն էտապը, երբ միջնա դարյան հայ քնարերգությունն իր մեջ լայն չափերով ներծծել էր հայ ժողովրդական բանահյուսության կենսա հաստատ էությունը և դարձել իրական կյանքի ճշգրիտ, գեղարվեստորեն հուզիչ ու համոզիչ վերարտադրությունը

Հոգու և մարմնի երևակայված պայքարը հիմք հան-դիսացավ նաև քնարական զանազան զրույցների, մեղա յական աղերսանքների, որոնք աստիճանաբար վերաճեցին գրական մի ամբողջ ուղղության Ներսես Մոկացու «Մանուկ մտավարժ էի» ողբը պատկանում է ահա այդ ստեղծագոր-ծությունների շարքին Ողբի մեջ բանաստեղծը քննադա-տում է հասարակական գլխավոր չարիքները՝ արծաթասի

---

1 Մ Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, Բ, Երևան, 1946, էջ 588

րությունը, կաշառակերությունն ու հարստահարությունը. Նա խարազանող խոսք է ուղղում նաև իրավունքի և ուժի անարդար տիրապետության դեմ

Արար և փիլոն արկեալ
    Թէ լծովս խոր խոնարհ եցայ
Եւ անեղագոչ սաստիւ
    Ի փոքունց վերայ բարձրացայ
Եւ սիրամարգի նման
    Սիգալով փերևեթլ ցայ

Հեղինակը տվել է ժամանակի սոցիալական չարիքների մերկացումն ու քննադատությունը Ըկյաեի առնելով հատկապես հոգևորականների ստորյան. Եվ Ներսես Մոկացու հիմնական նպատակն էլ դա պիտի լիներ, որպեսզի կարողանար քարոզական մաքուր միաբանություններ հիմնել ու աշակերտներ դաստիարակել. Ողջում մեկը մյուսին են հաջորդում տպավորիչ պատկերները, ռիպյոկ համեմատությունները, որոնց շնորհիվ միմյանց են հակադրվում կենցաղավարության քարոզական ու անբարոյական, խրախուսելի և մերժելի, ազնիվ ու խոցելի կողմերը առաջինների դրվատմամբ և երկրորդների պախարակումով Միաժամանակ ակնհայտ է, որ բանաստեղծը բացահայտում է մարդկային բնավորության թերությունները, ցանկանալով մարդուն տեսնել իր էությունը խաթարող արատներից մաքրըված

Ներսես Մոկացու ստեղծագործության մեջ իր ուրույն տեղն ունի «Աստուած և տէրն ամենայնի...» տողով սկսվող ընդարձակ բանաստեղծությունը, որը երկու հեղինակի գործ է Ներսես Մոկացու և նրա աշակերտ Ստեփանոս Ծառախեցու Լրացման մեջ Լլ իշխում է շարադրանքի նույն լեզուն,

ոնը, տաղաչափությունը և ոգին Այդ հավելումը կատարված է հեղինակի գիտությամբ Ներբողում զգալի են ժողովրդական ավանդության շունչը և ազգային կյանքի որոշ կողմերի արտացոլքը Ներբողում հատուկ տեղ է տրված նախաքրիստոնեական շրջանի պաշտամունքի նկարագրությանն ու կռապաշտության հալածանքին Ներկայացվում են Անձևացյաց գավառի հռչակավոր Կանգուար և Ագռավաքար կռատները, որտեղ պաշտվելիս է եղել հատկապես հեթանոս հայության հռչակավոր աստվածուհին Անահիտը, որին և փոխարինում է քրիստոնեական Աստվածամայրը Ներբողը մեզ է հաղորդում ազգագրական նյութեր Ուշագրավ են հատկապես աղվեսի դիցաբանական կապը Անահիտի հետ, ինչպես նաև «յուղոտ ուլունքի» կայծակից և քուրայից ստացված լինելու մասին եղած վկայությունները

Անահիտ աստվածուհու մասին մեզ հասած տեղեկությունները դեռևս թերի են Անհրաժեշտ փաստերի բացը լրացնում է ժողովրդի հիշողությունը, որը պահպանել է Անահիտի պաշտամունքի հեռավոր արձագանքները՝ այդ արձագանքների դրսևորումներից տեսնում ենք և այս ներբողում

Ներբողը յուրատեսակ գովք լինելով քրիստոնեության հաղթանակի, օտար բռնակալության պայմաններում, յուրովի նպաստում էր հայ ժողովրդի համախմբմանը ազգային դավանանքի և հայրենասիրական գաղափարների շուրջը

Ներսես Մոկացու ստեղծագործություններում կարելի է հանդիպել հայտնի գրական երեք սեռերին էպիկական, քնարական, դրամատիկական: Միջնադարյան գրական տեսակների առումով էլ Ներսես Մոկացու ստեղծագործությունները բազմազան են Նա գրել է և ներբող, և՛ ողբ, և

տաղ, և գանձ, և աղոթք, և տրամախոսություն Նա ներբողների բնագավառն է ներմուծել հայրենասիրության, դպրության, լուսավորության գաղափարների փառաբանումը, ընդլայնել է նաև գանձերի թեմատիկ սահմանները՝ նյութ դարձնելով ժողովրդից ելած հայրենասերների գործերը Նա խորացրել է վիճաբանական կոչվող գրական տեսակի մշակման փորձը և տվել է ժողովրդական նյութի լավագույն մշակման օրինակ ի դեմս երկնքի և երկրի վիճաբանության

Ներսես Մոկացու լեզուն գրաբարն է, սակայն ժամանակի շունչը մղել է, որպեսզի նա խուսի համեմատաբար պարզ ու հասկանալի գրաբարով, տեղ-տեղ հասնելով խոսակցական լեզվի մակարդակին Պատահական չէ, որ նրա ստեղծագործությունների լեզուն գրավել է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության հեղինակների ուշադրությունը

Ներսես Մոկացին եղել է եռանդուն գործիչ և շնորհալի բանաստեղծ, որի հասարակական քաղաքական դիրքորոշումը և գրական հավատամքը ներտորեն միահյուսվել են ի նպաստ այն ազնիվ նպատակի, որն ապահովում էր օտար լծի տակ հեծող հայ ժողովրդի գոյատևումն ու ապագան

ԱՇԽԻՏԱ ԴՈՂՈՒԽԱՆՅԱՆ



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՎԻՇԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Երկինքն ու գետինքն եղբարք,
Ամապի ո՞ր քան զո՞րն աւելի
Ձերկնից բարձրութիւնն ասեմ,
Նա գետնին պտուղն աւելի

Երկինքն գետնին ասաց.
— Բան ունիմ քան զքեզ աւելի.
Ձպայծառագոյն աստղունքն՝
Ամէնն ի՛մ կողէն կու լինի.

Գետինն երկնուցն ասաց
— Աստուծոյ մունետն աւելի,

Զհազարագոյն ծաղկունքս՝
Ամէնն ի մ կողէն կու լինին

Երկինքն գետնին ասաց
— Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի
Իմ ցօղն ի բեռէ կտրեմ,
Քո ծաղկունքն որո՞վ զարդարի

Գետինն երկնուցն ասաց.
— Աստուծոյ մունետթն աւելի
Դու ցօղն ի ծովէն կառնուս,
Ծովուն ակն չիսնէ՛ կու լինի
Ջիմ ակն որ ի չիս քաշեմ,
Նա քո ցօղն ուստի՞ց կու լինի։

Երկինքն գետնին ասաց
— Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի.
Պարզիմ, բարկ արև դիպիմ,
Քո ծաղկունքն ամէնն խըշըրի

Գետինն երկնուցն ասաց.
— Աստուծոյ մունետթն աւելի.
Ջուրն ի չանդնդոց հանեմ,
Որ ծաղկունքս ամէն զարդարի

Երկինքն գետնին ասաց
— Բա՛ն ունիմ քան զքեզ աւելի
Կայծակ ու կարկուտ առնեմ,
Քո ծաղկունքն ամէնն խափանի։

Գետինն երկնուցն ասաց
— Աստուծոյ մունաթն աւելի
Անչափ ձոր ւ առու ունիմ,
Քո կարկուտն ի մէջն լցուի

Կարկուտն հեղեղ կապի,
Ի ծովերդ ի վայր վտարի,
Դառնամ ա մպ կրկին կու տամ,
Ո՛ ծաղկունքն ամէն քամալի

Երկինքն գետնին ասաց
— Բան ունիմ քան զքեզ աւելի
Ուր աղէկ կտրիճ մ որ կայ,
Գայ, ի քո ներքն գնտանի

Գետինն երկնուցն ասաց
— Աստուծոյ մունաթն աւելի
Սլտուած իր տուած հոգին
Թէ կառնէ, նա ի՞նչ տի լինի

Թէ մարմինն ի յիս չառնեմ
Նա աշխարհ հոտուն անցանի
Հրեշտակք ի հոտուն փախչին,
Երկինքն ու գետինք տատանի

Երկինքն գետնին ասաց
— Բան ունիմ քան զքեզ աւելի
Ինն դաս հրեշտակքն որ կան՝
Ամէնն իմ կողէն կու լինի

Գետինն ել կուցն ասաց
— Աստուծոյ մունաթն աւելի.
Նուրբ առաքեալք, մարգարէք՝
Ամէնն իմ կողէն կու լինի

Երկինքն գետնին ասաց
— Բա ն ունիմ քան զքեզ աւելի.
Եօթն տակ երկինքն եմ ես,
Որ արև, լուսին կու լինի

Արև ու լուսին ւ աստղունք
Ամէնն ի մ կողէն կու լինի
Ստեղծող արարիչն աստուած
Աթոռով վրաս կու քազմի

— Գետինն երկնուցն ասաց
Աստուծոյ մունաթը աւելի
Եօթն տակ երկինքդ ասեմ,
Ան ամէնն ի վա չր տի թափի

Արև ու լուսին ւ աստղունքն,
Որ երթան ի հետ խաւարի,
Եւ քո արարիչն աստուած
Աթոռով յաշխարհս տի իջնի
Դատաստան գետի ն տի լինի

Ապա շածագաւ երկինքն
Ու գլուխ եդիր ի գետնի
— Բան մ երկու գանգատ արի,
Զան ի քո սիրտն մի տանիր

Դու հիմն ես Եկեղեցւոյ,
Գերեզման սուրբ վարդապետի
Դու խունկ ես բուրվառ ի լի,
Օրէնք քո վերայ հաստատի

Մանկո ւնք, դուք աճափ արէք,
Այդ աճափդ է զարմանալի
Դուք այլ ցածագէ ք, մանկտի ք,
Ու գլուխ դրէք ի գետնի
Քան զերկինքն ի՞նչ բարձր կայ,
Որ գլուխ եդիր ի գետնի,
Այսօր վրան կու քայլենք,
Վաղն մտնուն ք ներքև գետնի

ՆԵՐԲՈՂԵԱՆ ԳՈՎԵՍՏԻ ՀՈՐԵՅՈՒՆՅ ԱՐԱՆՑՆ, ՈՐՔ ԵՂԵՆ ՍԿԻԶԲՆ ԱՆԱՊԱՏԻ ԿԱՐԳԻԼ ՅԱՋԳՍ ՄԵՐ

Օրհնեա լ տէր Յիսուս փրկիչ
Նորոգողըն ազգի մարդկան,
Որ միշտ զբարիս կամի
Եւ սպասէ մերոյս փրկութեան
Յայսմ յետնեալ ժամանակիս
Յիշատակ արար Նորոգման
Բացեալ մեզ դուռն բարւոյ
Եւ եհեղ ձիր ողորմութեան
Ով որ լուսանցոյց ոնի
Ճաճանչի այս մեծի ծագման,

Կարէ զայս ի միտ առնուլ
Ի իմանալ պարգև տիրական
Սկանջ ունողացդ ասեմ,
Ունկն դիք բանիս միաբան,
Լսէք, փափագող լերուք,
Ծարաւի բաժակիս արբման,
Զի սիրոյ սեղան կազմեմ
Եւ կոչեմ զձեզ ի իւրախարան,
Կայթելով ծափըս հարէք
Ի լսել զճառս երանական
Զի թէ մեք յետնեալ գտաք
Եւ չեղաք արժան գովութեան,
Սակայն մերայինքս եղեն
Պարծանաց տեղի և կայան
Աստանօր պատմել կամիմ
Զեղելոցս, որ մեզ դիպեցան,
Թէպէտ վաղափոխ եղեալ
Պատահարք իմն երևեցան
Զի հայրն վերին գթած
Ի խնդիր ել տանն Արամեան,
Նգիտ զմեզ անկեալ յորսայս
Ի ծուղակ չարին յանդիման
Զգեալ ըզդաստակ բազկին
Զեղջերաւս մեր թշուառակսն,
Զնոն ետուր կանգնեաց զմեզ
Գլորմանէս, որ յերկարեցան
Սակաւ մի հոգի առաք
Ի խնամոցս այս արարչական,
Որպէս Պետրոսին եղև

Ի ծովուն ալէկոծութեան
Շահ Աբաս պարսից արքայն,
Որ տիրեաց տանն Արևելեան,
Ընտրեաց զգուշդն արեաց պարսից,
Օսմանին եկաց յանդիման
Մինն ի յընտրելոց դասուցն
Երևեալ քրիստոսադաւան,
Այր հըզօր, քաջամարտիկ,
Ճակատուն բազմաց ախոյեան
Ընդ որ հաւանեալ արքայն
Եւ գովեաց բազմաց յանն իման,
Ապա ակն ածէր սիրով
Միամիտ նորայն քաջութեան
Կաշոյց զնա իշխան երկրի
Հանեալ ի պատիւ մեծութեան
Մեծս ըդոյ փառօք պատուեաց
Եւ կոչեաց զնա իւր սիրական
Հախնազար հայրըն նորա
Յորջորջեալ զնա սեռական,
Հայկազն անուանէր զնա՝
Նմանիլ Հայկազնին Տիգրան,
Որ յուսաց յաղթող գտաւ
Եւ սկիւթացոց հիւսիսական,
Որոյ ի դիմի Բարաւ
Քուրդըն մեծ վիշապ Ածդահան
Նակայն անակուշտն եհար
Զգեղարդն ընդ լերդակողմանն
Զլեարդն և զթոք նորա

Գեղարդեամբն ի մուրյն եհան
Մովսէս Քեռթողն պատմէ
Եւ գովէ զնա յոյժ զանազան,
Զձև և զտիպ կերպին,
Զքանդակն մեծ ընդ զօրեղութեան
Նոյն սա անպակաս կերպիւ
Եւ ձևովն իւր արքունական,
Յաւել քան զնա ի փառս
Հաւատով սուրբ Երրորդութեան
Պել ն, հսկայաձև մարմնով
Եւ տիօքն վայելչական,
Նաև տիպ պատկերին գեղոյ
Ծնողհաւր և դիւցազնական
Կորովի աղեղնաւոր,
Քամանդար անխախտական,
Ընդ մէջ իւր ածեալ սուսեր
Զերկսայրին և զթուրն կտրան
Զվահանն պղընձապատ
Աչողակ ընդ ձախոյ կռանն,
Հարթ համակ նկարակերտ
Նպաստակ նետից ուժգնական
Զլախտն աջոյ ձեռին ունէր,
Նիշ գուշակ ինքնիշխանութեան,
Յահեկէն կախեալ կռան՝
Կոչէաւր ւ ինքն տաւնիշան
Հասակն զրահաւորեալ,
Նաղաւարտ մխակ գագաթան,
Սաղահքն յերկոքին կողմանց
Փքնալից ծաղկեալ զանազան

Ի շահատակել զինուցն
Ահընկէց լինէր նա մարդկան
Եւ ի խիզախելն ուժգին
Բեկանէր նա զիւր դիմակայն
Յարշաւելն երիվարին
Կրթածու և վարժողական,
Դափր հատանէլ դաշտին,
Դողաշուշանէր զամենայն
Դասք հրազէն հետևակաց
Առաջի գնդակ ընթանան,
Զգուշութեամբ մէծաւ ապասեն
Հրամանին յոյժ խորհրդական
Իսկ յարիութիւն անձինն
Անքատակ ի յորդիս մարդկան
Եւ անհամեմատ խոհեմ
Ի շարժել շրթանցն յատկանան
Ճարտասան, արագախօս,
Անթարթափ յարտաբերութեան
Եւ բաղխոհական ոճով
Բարբառէր յարքայից դիւան
Իսկ ներքին մասամբ հոգւոյն
Երկիւղած և զգաստական,
Խոնարհ էր և հեզ բարուք,
Ի վ սիրով աստուածպաշտութեան
Անապատի սիւն լինէր
Եւ գրգէր գթով հայրական
Մինչ յիշխանութեան միջին
Զանք դնէր անապատական
Յայմմ քանակեալ աւուրց

Ձայտնեցաւ քարոզն ընտրութեան
Պօղոս վարդապետն արի,
Զատագովըն ճշմարտութեան
Հոմանուն առաքելոյն,
Համարուեստ նոյն քարոզութեան,
Փողելով հրատարակէր,
Յուշ առնէր զբանն արթնական
Կարծրագոյն վիմօք հաստեալ
Ջտուն հոգւոյ հաւատոյ հիման,
Զգուշութեամբ փորեալ ի խոր
Ըստ բանից տերունական
Իշին անձրևաց հեղեղք,
Փորձութիւնք ի յորդոց մարդկան,
Ի Վասպուրական երկրին,
Մոկաց տուն և ի Քուրդաստան
Կոլծանել ոչ կարացին զնա
Ի յուսոյն իւրոյ քաջութեան
Ճշմարիտ ջանիւ գործեաց
Ի յայգւոջն տէրունական
Ի տարաշխարհիկ լինելն,
Ի գաւառն, որ կոչի Գողթան
Դարձեալ անդ զարթեաւ հին չարն
Եւ յարոյց կրկին հալածան
Առաջնորդք և եպիսկոպոսք,
Աբեղայք և եկեղեցական,
Հակառակ կաշին նմա
Եւ ընդդէմ նմին զինեցան
Վասն այն զնուաս ւրեաց

Կործանիչն ազգի մարդկան,
Զի յանձնէ աւերեացի
Տուն մեռոյս առաջնորդական
Միատեսակ թշնամի,
Հաւասար և համամման,
Զի պատակտեացին մարդիկք
Ի յարուցեն հերձուած չարութեան-
Ճգունն բազում կրեաց
Ի հայու ւ ի տաճկի դիւաց,
Վկայաց բազո մ ւոեդիս
Տեառըն մերոյ մարդեղութեան
Վարժող էր Հա ւանձանձիր,
Թէ լինէր ոք փափագ ուսման,
Թէ չէ լինքն ինքեան ասէր
Եւ երգէր զերգս աստուածական
Զի ներքին մշակութիւն
Չի մնատ պարապ ընդունայն,
Այլ խոկմամբ աստուածայնոցն
Վերընթաց լինէր յարաժամ
Ջյաճախ ուտելն արգելոյր
Եւ կարկիչ էր յանդգնութեան,
Մանաւանդ աբեղայից՝
Խափանիչ համարձակութեան
Ջնախանի կարգն յառաջ ածէր,
Կանոնօք դնէր ի յատեան,
Վկայէր վասն աշխարհի,
Զի էին գործք իւր չարութեան
Վասն որոյ իմ ամանիքս,
Որ կրօնիւք յերկիր կորացան,

Կարի ատեցին զնա
Բարկութեան նախանձ բրդեցան
Հազար և վաթսուն և եօթն
Ցաւելեալ հայոց թուական
Հանկարծ շարժեցան մարդիկ,
Թինդ առին և ժողովեցան
Կաթողիկոսունք երկու,
Եպիսկոպոսք համանգամայն,
Աբեղայք ու վանականք
Եւ տէրտէրք շատ գումարեցան
Ուխտադիրք եղեն միմեանց,
Խորհեցան խորհուրդ միաբան
Եւ չու արարեալ գնացին
Ի Թաւրէզ քաղաք շահաստան
Ղառչղղա խանին ոիւան,
Տուրևատ խօսիւք շատացան,
Թէ այր մի օտարական
Մեզ լինի պատճառ խանգարման
Այլ նա վերին խրճամօք
Մարդկութեամբ կոչեաց ի յատեան,
Ասաց, թէ քահանայից
Չէ պատեհ կալ անմիաբան
Վասն որոյ փոշիմանեալ
Եվ ինքեանց մեղադիր եղան,
Եկեալ թողութիւն առին,
Ականայ կամօք հաշտեցան
Ահա յարուցմունք գետոց,
Փորձութիւնք աստ եղբայրական,
Ուժգնակի քախեալ զտունն,

Զհաստեալն ի վերայ հիման
Իսկ գթած տէրըն բարի
Զնա պահեաց առանց սասանման
Եւ յաւել նըմա շնորհ զգալի
Տուն շինել նմա տիրական
Տաճարաց հոգաբարձու
Յաստուծոյ էառ հրաման,
Թէ արվաւ յայտնի լինի
Սյս խախտեալ ազգիս ի հիման
Թէ սա է շինօղ բալ ի
Լքելոցն յուսահատութեան,
Զմեղօք կործանեալս կանգնէ
Եւ առնէ տաճար տիրական
Կարծեմ, թէ սա ի ճրագն
Ըստ պետին առաքելական,
Որ ի գիշեր կենցաղոյս
Խաւարչուտ և նեմական
Ճաճանչ նշուլից փայլևաց
Եւ շաւիղ բանաւր նա մարդկան,
Մինչ տիւն լուսաւորի
Արուսեկի մեծի ծագման
Համբեր սա համբերելով,
Խիղճ մտօք ի գուբ տղմական,
Մինչև լուաւ աղօթից
ԵՒարարիչ տէրըն գթական
Եհան ի կաւէ գբոյն,
Ի վիմին եդ հաստատութեան
Եւ արկ ի բերան նորա
Օրհնութիւն ըստ երգոյն Դաւթեան

Ս ձեղ լոյսն արարչական
Լոյս վառեաց խաւարեալ մարդկան.
Երկու լուսատու ւսատեղքն,
Որ յարեմտից ծագեցան,
Ի Երուսաղէմ ւսրնեալք
Ի լուսոյն լուսով լրացան
Եւ մեզ խոր խաւարելոցս
Լուսատուք նոր առաքեցան
Նարգիս մեծ եպիսկոպոսն
Եւ տէր Կիրակոս արին այն,
Սլացեալ հոգւոյն թևօք
Եւ հասին սմա օգնական
Պետրոսին և Յոհաննու
Օժանդակ եհաս Պօղոսն այն,
Իսկ այս Պօղոսին հասին
Ստուարաստեղն երկու գաւազան:
Նոր իմն օտարացուցիչ
Շշընջիւն անտի յայտնեցան
Մերկ պարտին լինել մարդիկ
Քրիստոսի կարգել զօրական
Ահա նորահրաշ հնչիւն
Դևռաբոյս և անյաղտական,
Թէ պարտ է զմարմին թողուլ
Եւ հոգւոյն լինել պաշտպան
Նոր երգ, նոր ներբողեան,
Նոր կական ի ձայն ցնծութեան.
Նոր պարըս խմբել այսօր
Իւ երգել գոհաբանական
Նոր պարու պարապետիս

Պարաւորք լինել համաձայն
Երկրպագութիւն և փա՜ռք
Տուղին ի ձայն գոհութեւն
Որ զայս երկու ուսուցիչս
Առաքեաց մեզ ճշմարտաբան,
Գործնական իմաստութեամբ
Կատարել միշտ զտեսական
Զայս եզիևքս ամոլական,
Բանաւոր և արդիւնական,
Բանական երկրի մշակ,
Խստատանջ և միշտ ժրաջան
Այս երաշտացեալ գետինս
Արտասուաց ցողով արբուցան,
Զայս խոպանացեալ երկիրս
Արարին բերրի անդաստան
Հերկեալ խոատով զայգիս
Զարահնար փուշքն խլեցան,
Եւ ապականիչ ալուեսքն
Որք կալեալ և որք ղօղեցան
Նոր գարնանային հողմունք
Քաղցրասիգ յայգիս հնչե՛ան,
Եւ ձայն տատրակաց արբո
Մնչիւնիւ աստէն լսեցան
Ջմեռն և անձրևք անցին,
Խստութիւնք արտից կակղեցան,
Եւ ծաղիկ զարմանազան
Ի յերկրիս մեր երևեցան
Իջցուք ի յայգիս եղբարք
Է ւ տեսցուք ծառք համանգամայն,

Ծաղկեալ որթ և թուզ, և նուշ,
Նոնենիք և մուրտ, և շուշան
Երկուց նմանեալ հողմոցն,
Որ յառակողէն ասացան
Արի հիւսիսի փչումն,
Ե կ, հարաւ ջերմին սիրական
Շնչեա ի պարտէզս մեր՝
Խնկալից և խիտ բուրաստան,
Բուրեացին խունկք մեր անուշ
Եւ ծաղկունքն, որ հանդիսացան
Փա՜ռք նորոգողին տացուք,
Որ եւս դուռն ապաշխարութեան
Եւ փոխհատուցուք աղա
Ներքողեան գովասանական
Այս երկու մեծ լուսաւորք
Կորնթարթն երկնից կառուցան,
Լուսատու լինել յերկիր
Եւ նշան գոլ ժամանակաւն
Երկու այս բեւեռ աստղունք,
Որ ի վեր ւ ի վայր կայացան,
Ուրով կարգք ակեղեցւոյ
Կանոնիւ սահմանադրեցան
Երկու պատուական ակունքս,
Որ երկու կուռն Ահարոնեան
Նշաձքըն Իսրայէլի
Մեղանչման և արդարութեան·
Երկու ձիթենի ոտէշքն,
Որ յերկրի նոր արմատացան,
Գնդին լուցելոյ յաջմէ

Ի յահեկէ ոստովք բարձրացաւ
Մինչ ի հովանին սոցա
Ախտաժետք բազումք կուտեցան,
Թանահատի յանապատս
Եւ ձիթովս այս բժշկեցան
Պարարտ ձիթենի գոլով
Տաթևու գաւթիս տնկեցան
Եւ առատացեալ պտղով
Քրիստոսի աստ ընծայեցան
Երկու բարձրաբերձ լերինք
Սիերմոն և Թաբօրական,
Եւ ակունք Յորդանանու,
Յոր մարդիկ նոր մկրտեցան
Ենովքալ ու Եղիայի
Փոխանորդ յերկրի շրջեցան,
Թէպէտ աննման կենօք,
Այլ գործովք յոյժ համանման
Դիմօք և ձևովն իւրեանց
Հանդերձիքն խոշորական,
Ծանուցին որդոց մարդկան
Զաշխարհի վայելս ընդունայն
Երկու դրունք տեսանելեաց
Կենդանեացս յարարչէն եդան,
Յատուկ ի միմեանց գոլով
Մի շաւիղ տեսլեան ընթացան
Այսպէս այս երկու ընտոեալս
Բացակալ տեղեաւ մեզ ցուցան.
Մինն Պոնտացի գոլով,
Մինն ի տանէէն Արարատեան

Թէպէտ առանձին դիմօք
Կրկնակի կերպիւ յատկացան
Մի կամք, մի կարգ, մի կրօն,
Մի հոգի կառավարեցան
Ցնծալ պարտի Հայաստանս
Եւ խայտալ խնճոյս հոգեկան,
Պարանոցիկ առնել յուսով
Եւ երգել երգ հոմերական
Նոր սրինգ և նոր տաւիղ,
Նոր քնար և նոր երգարան,
Նոր կաճառախումբ լինել
Եւ քննել յոյժ խորհրդական
Բանալ ըզարգանդ մտաց
Եւ ճաշակ տալ համբերութեան,
Ընդել ըզհամեղութիւն
Բաժակիս այս իմաստութեան
Գրեան վաղընջուց փակած
Ընթերցան, ոճով մեկնեցան,
Եվ լապտերք եկեղեցւոյ
Գալատեամբ սոցին վառեցան
Բարիոք մեզ նաւաստիք
Ի ծփման ծովուս յայտնեցան,
Վարեցին թևօք հոգւոյն
Եւ հասին յանձրաւ ի որութեան
Սինչ յայս խրախութեան կայաք,
Աջողակ հողմով ալացման
Եւ յաջ և յահեակ թողուցեալ
Դիտէաք զկէտն ուղղակ֊ն,
Յանկարծ հողմըն ուռուցիկ

Փոթորկեաց զնաւս առժամայն
Եւ շրջապատյտ առեալ,
Տատանէր յալէկոծութեան
Հողմով կուտակեալ կոհակք
Ի ներքուստ անդուստ խռովեցան,
Եւ ծովս համդարտակման
Ցամբոխեալ ալիս փոխեցան
Թշնարանն առազաստին
Ի ծնէնս պատառեցան,
Եւ կայմն ամբարձման պարզող
Ի ծովու խորըս սուզեցան
Դեկն և ղեկավարն, և թնքն
Խառնելեացն խափանեցան,
Եւ շարքըն տախտակամած
Ի միմեանց բաց անջատեցան
Երկու լծակաց մածմունք
Ծնօտիքըն բաժանեցան,
Եւ լաստըն ողնափայտիւն
Առ քեղիքն խարխալեցան
Անհա արդ մեծ արհաւիրք,
Աղաղակ և գոյժ լալական
Տրտմութեան ալիք դիզեալ
Առ թիկունս մեր կործանեցան
Զի այս չորս անկեան հիմունքս
Յորոց նաւըն մեր հաստեցան
Ուխտեալ ի միում ամի
Փոխեցան ի միջոյ բարձան
Այս չորս սիւնքս խարսխեալ,

Որ աթոռ տեառն կազմեցաւ,
Խոհեմ, արի և արդար,
Մղջախոհ առաքինացան
Զորս գետոց նման ճոխեալ
Արբուցին զծարաւ Հայաստան,
Նոքա ի յԱդին դառնան
Եւ սոքա ի յերկնից կայանն
Զորից աւետարանչաց
Նմանեալ առ մեզ լսոնեցան,
Եւ չորս տարերաց նման
Զորս յանկիւնս համբաւեցան
Քառադէմ կառաց նման,
Որ Առիծ և Եզն աւացան,
Մարդ և Արծուոյ նման
Փութացէս առ տէր վլացան
Զորս կարգէս քրիստոնէից
Ըստ միոյ միոյ ընտրեցան
Իշխանն ընդ վարդապետին,
Հայրապետն և առանձնականն
Ի հազար ւ եօթանասնին
Ցանկեալ հայոց թուականն
Եղև կատարումն սոցա,
Որք ի մէնջ առ տէր փոխեցան
Թէ դիմառնական խօսիմք,
Ո՜վ եղբայրք իմ և սիրական,
Թէ զմեզ ի խնճոյս ածեր
Եւ փողես երգ դամբանական
Խիստ մի խռովիք, եղբարք,

Զգիտել զիրս կենցաղական,
Կարգ եղեալ է արարչին
Զմնալ ոք աստ անվախճան
Մանաւանդ այս Հայաստան
Վաղվաղուկ և փոփոխական,
Ի հարց և պապանց ուսաք,
Յառաջին սրբոցն ասացան
Հրախոս հանէն առնուն
Մեր ծաղկունքս և խիստ զօրանան,
Եւ տապըն խորշակահար
Ծաղկընկէց առնէ առժամայն
Անա ձեզ ձայն աւետեաց,
Սփոփանաց և յուսադրական,
Թէպէտ սերմանողքն անկան,
Սերմանեալքն յոյժ արդիւնացան
Մարմնով հեռացան ի մէնջ,
Բայց հոգով ոչ որոշեցան,
Միայն զպաղթանակն առին
Ի ախտալից կենաց փոխեցան
Անդէն բարեխօս բարի
Վասն մեր առ տէր կացուցան,
Զաթոռով անմահ գահինն
Ընդ քահանայիցն կարգեցան
Փա՛ռք և գոհութիւն տացուք
Աստուծոյ անմահ տէրութեան,
Զի զլետնամնաց սոցա
Պահեսցէ ի խաղաղութեան
Առ ձեզ պաղատիմ, եղբարք,
Ես՝ Ներսէս, յոյժ թշուառական

Հայցեցէք ընդ իմ առ հարքս
Յիշել զիս առ անմահ արքայն
Փոքրիկ Փիլիպոս դպիր՝
Փափագող բանիս տաղական,
Զայս խնդիր արար, թէ աստ
Յիշատակ, որ ողորմի տան

Յ. ԳԱՆՁ ՆՈՐ ՆԱՀԱՏԱԿԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՔԱՀԱՆԱՅԻՆ ԱՆԴՐԷԱՍԻ ՆԱԽՃԱՒԱՆՑՒՈՅ, ՈՐ ԿԱՏԱՐԵՑԱՒ Ի ՇԱՀ-ԱԲԱՍԷՆ. ԱՍԱՑԵԱԼ ՇՆՈՐՀԱԼԻ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ԲԵՂԼՈՒ ՆԵՐՍԷՍ ԿՈՉԵՑԵԱԼ ՄՈԿԱՑԻ

Հաստդ անմահական,
Հացդ իջեալ մարդկան
Ընդ հին մանանայն
Ծնունդ հայրական,
Որդիդ կուսական,
Միակդ անբաժան
Հօր սանմման և բան,
Կնիքդ էութեան,
Նոյն և կերպարան
Անձրեքն նըշան,
Անհասին նման,
Նկարդ իսկութեան
Ի մեր կերպարան
Եղեր տեսարան
Մեզ համանման
Շրջեալ ընդ մարդկան

Ըստ մեր բնութեան
Այս թափառական
Իջներ գերեզման
Շիրմին քնարան
Վիմափոր տապան
Բուսմամբ յարութեան
Արարեր ցորեան
Յոյժ արդիւնական
Ջուր մարդիկ լցան,
Դաշտք պարարտացան,
Լերինք ծաղկեցան
Օրհնեալ բան քո արարչական,
Որ արարեր զԴակքս ամենայն
Սղաչեմք

Ճիւղք յոգնատեղեան
Երփնեալ գունեցան
Տարազս անման
Օրինօք կեցան
Եւ ի վեր անցան,
Որ կոյս մնացան
Ոմանք ճզնեցան,
Ի սանց հեռացան,
Պէս-պէս լկնեցան
Ի այլք արիացան,
Նահատակեցան,
Արեամբ կարմրեցան
Բարեխօսութեամբ խնմբից սրբազան,

Արժանացո զմեզ քաւութեան
Սղաչ[եմք]

Որթըդ ճշմարտեալ,
Ուռ բազում ձգեալ
Եւ զերկիր լցեալ
Առաքեալքն ընտրեալ
Ի քեզ հաստատեալ
Եւ յաշխարհ սփռեալ
Յորոց աւետեալ,
Գրիգոր ուղիշ լեալ,
Զմեզ լուսաւորեալ
Յատեան վկայեալ,
Զարաչար տանջեալ
Եւ ևահատակեալ
Վիրապին տքնեալ,
Ամօք յերկարեալ,
Տաւնաւին եղեալ
Յուտով ոռոգեալ,
Հաւատով հաստեալ,
Արմատ աճուանեալ
Եւ անդէն կլեալ,
Բուսեալ, բարձրացեալ
Եւ զմայրըն ծաղկեալ

Եւ զորթ իւր ձգեալ
Հիւսիս ճովաձեալ,
Ծով Կազբից հասեալ
Եւ շառաւիղեալ,
Միջագետս լցեալ,
ԶԱսորիս կալեալ,
Յորմէ հայք ուսեալ,
Վիրք աշակերտեալ,
Ալուանք մրկըրտեալ
Սա հոգով տեսեալ,
Յորոց մկրտեալ՝
Ոմանք գայլ դարձեալ.
Իսկ որք մնացեալ՝
Լուսակիզն եղեալ
Ի արեամբ շիկնեալ
ի ա[րեհօտութեամբ խըմբից սրբազան,
Արժանացո ըզմեզ քաւութեան
Աղաչեմք]

Արմատն այն թալեալ,
Ի յերկրի ծածկեալ,
Որ բանականս լեալ
Անտի յառաջեալ,

Սո Վարդան ծաղկեալ,
Սիրովբն վառեալ
Ղևոնդեանքն ընտրևալ
Գունդրն յառաջեալ,
Պրսակաւոյեալ
Տեսիւն աստ լըցեալ,
Գալքն եղեն Խորեալ,
Ի փաթսըն խառնեալ
Գաոինքն ողորկեալ,
Արեամբ պարարեալ,
Գաոինն ընծայեալ
Բազումք յայս վարժեալ,
Ոգով զօրացեալ,
Ըզչարըն վաճեալ
Ժամանակք անցեալ,
Եւ ամք յերկարեալ
Եւ աու մեզ հասեալ
Յամըս վերջացեալ,
Յաւուրըս յետնեալ
Հաւատ հնացեալ,
Սէրըն սառուցեալ,
Գոթըն ցամաքեալ,
Բարին սպառեալ
Յանկարծ արծարծեալ,

Հուրն աւն ցոլացեալ,
Նշուլիւք փայլեալ,
Մանուկ մի ընտրեալ,
Սնդրէաս կոչեալ,
Փառաւոյ կարգեալ
Անդր ի վեր անցեալ
Սնդրաւնկաց նմանեալ,
Անդրանիկ եղեալ
Նորոգ վկայեալ,
Զհինգն նորոգեալ,
Ընդ սուրբըս դասեալ
Բարեխօսութեամբ նոր վկային քո,
Ողորմութեան զմեզ արժանացո
Աղաչեմք

Սուրբ այս նազելի,
Գեղով գովելի,
Յոյժ վայելչալի
Անձամբ հաճելի,
Տիօք պանծալի,
Դիմօք շնորհալի
Տիպըն հրաշալի՝
Մաղաքիայի
Սուրբ մարգարէի
Եւ հոգով ի լի
Ըստ Դանիելի,

Պատժող չար ծերի
Զի չարըն նախկի,
Որ ընդ մեզ մարտի,
Սա դատեաց յոգի
Նախատեաց յայտնի
Ընդ իւր գործակցի
Շահ-Աբաս պարսկի
Սա Եղիազի
Հոգոյն նմանի
Կալով յատենի
Ասէր արքային
Երդմամբ հաւաստի
Վասն իւր հաւատի
Թէ տէր կենդանի,
Որոյ առաջի
Ես այսօր կացի,
Ո՛չ փոխանակի
Ընդ էի մասի
Սէրըն Քրիստոսի
Սա նոր Նէեմի,
Ի խնդիր լինի
Հրոյն բուրվառի
Ծածկեալ ի խորի,
Թաղեալ ի տղմի,
Մխոցաւ հանուի
Դէմ արեգակնի
Տապացեալ շողի,
Յորմէ արծարծի
Սովաւ բորբոքի,

Ծիրանաճաղկի
Եւ արտափայլի
Որով և մատչի
Եւ պատարագի
Տեառնըն Քրիստոսի
Էր քաղաքացի
Սա մեծ քաղաքի
Նախիջևանցի,
Որդի՝ բրիստոնէի
Ծնօղաց բարի
Եւ երկիւղածի
Սնուցեալ վարժի
Ցուսումըն գրի,
Հրահանգիւ կրթի
Յարբունս հասակի
Հասեալ կատարի
Քահանայապետի
Յընթերցումն արի,
Վարուքն բարի
Եւ առաքինի
Զոր դպրոց կարգի,
Վարժարան դնի,
Մանկունք ժողովի
Իսկ սա հայր կանգնի
Վարժող ցանկալի,
Խրատ ուղղեկի
Ըստ Փեռնէհեզի
Վրիժախնդրի
Տեառնակոչս կողմի,

Զչար սովորութիւն
Անօրէն պարսկի,
Ամբարիշտ ազգի
Ծածուկ հնարի,
Խափանել կամի
Ըզչարըն յայտնի
Զհերըս տղայի
Յապաւէ նախկի,
Զի տգեղասցի,
Ի ինքն պատրաստի
Դէմ կալ վտանգի
Փորձութեանց չարի
Ձիշեա զ[հոգիս ննջեցելոց]

Իսկ ի գալ չարին
Ընդ որ երևելին
Զեխ Ծահ Ապասին,
Բնակիչք երկրին
Փոքունք ընդ մեծին
Ընդ առաջ ելին
Նախաանձեալ տահկին,
Որ ծանօթ էին
Սուրբ քահանային,
Զարախիսկէին
Առաջի մեծին
Իւրանց շեխզադին
Զադագով ասին
Նա իւր հաւատին
Եւ սրբոյ խաչին

Քամահող Նդին
Կամաց արքային
Իւրեանց դատ քուշին
Տարեալ յատենին
Եւ հարցանէին,
Սատիւ փորձէին
Հաստատուն տեսին
Զհաւատ նորին
Սիրովն ի սրտին
Անվեհեր գտին
Ի պատասխանին
Զիմաստութեամբ լին
Սնդ վճիռ հատին
Ըապանման նմին,
Զոր ցանկայր ինքնին
Զպճղունս ծակեցին
Նւ յերկար թողին
Ի կախաղանին
Սակաւ խոցեցին,
Զի յամէ նմին
Յերկիւղ ռամկին
Իսկ նա միշտ կնքէր
Զնշան սուրբ խաչին
Ի շուք ճակատին.
Ի յառաւօտին
Մինչ յերեկոյին
Շունչըն քաղէին
Նաա աւանդեաց
Զմաքուր հոգին

Առ քո քաղձալին
Եւ նս ա[ռաւել...]:
Ներանձնականաւոր,
սերբանականաց,
Ներգոյի պննած,
Մարդկային ազանց,
Երկնային զօրաց
Ի երկոցունց պետաց:
Եղեր գերազանց
Կոյսդ գերապանծ,
Տեղի պարծանաց,
Մինչ լոյսըն բարձան
Ի քեզ բնակեաց
Ի ի քէն մեզ ծագեաց
Բախացիր, մաքրած,
Դու տեղի շնորհաց
Հոգոյն զօրութեանց
Սածիր ի ծնկաց
Եւ կաց ի յոտաց
Միշտ բազկատարած
Սուրբ որդոյդ փառաց
Տուր ձայն մաղթանաց՝
Ընդ մեղաւորացս
Զնորին նախընթացն,
Որ վաղ գուշակեաց
Յարգանդն փակած
Երջանիկն ընտրած
Պսակն փառաց,
Որ նախ վկայեաց,

Զլուսատուն ազանց
Հայոց և բազմաց
Զայնակից քեզ աստուած
Սրբոց առ աստուած
Մատիր խնդրուած,
Զի հեղցէ շնորհաց
Զիրըն պարգևաց
Յազգս տառապած՝
Ի բիւր բարութեանց,
Յառատ գթութեանց
Եւ ողութեանց,
Տացէ ի մասանց
Արքայս տօնողաց
Ի ի քէն խնդրողաց

4 Նկա ք նորազուարճ սանկունք եկեղեցոյ,
Համաձայն առէք զծողովուրդս աստուածոյ·
Խանդակաթ սրտիւ ի յերախան սիրոյ
Յիշատակութեամբ սուրբ վկայիս նորոյ
Վերահրընչեցուք նոր երգ մտօք պայծառ,
Նոր վարդիս բացման արեամբն վառիվառ
Ծիսուս, որ եղև մարդկան կենաց պատճառ,
Օրհնութիւն տացուք նմա ի մի բարբառ
Խառնեաց զմարդիկ ի հրեշտակաց կաճառ,
Երկրպագութիւն նմա և փառս անճառ
Բարդուղիմի իւ հայցել Հայաստանեաց,

Զհատըն սանահնոյ նախ ի Գողթան թաղեաց
Ոատովք բարձրացեալ տեղի թոչնոց կազմևաց,
Եւ երկիր լցաւ ի բազմաբեր արդեանց
Ժամն այն գարնանոյ և ամառան Էանց,
Եւ երկարութիւն աւուրց աւտէն աճեաց
Սաստիկ ցրտութիւն սառնամանեաց պատեաց,
Յաւուրցս այս վերջնոյ ըզմեզ խիստ պաշարեաց
Ի նոյն պարտիզէ հոտ վարդենոյ բուրեաց,
Զքիմըս քրիատոնէից անուշ հոտով զմայլեաց
Կրկնակի պատիւ, մեծ առաքեալն ասաց,
Արժանի լիցին ի ձէնջ դասք երիցանց
Զձայն այն վաղնջուց տէր Անդրէասն առթեաց,
Քահանայ օծեալ՝ եղև արեամբ ներկած
Եւ մեք կրկնակի տացուք գովութեանց,
Բարեխօս առնուլ զնա մեզ առ տէր աստուած

5. ՆՈՐԻՆ ՆԵՐՍԷՍԻ ՄՈԿԱՑԻՈՅ ԱՍՍՑԵԱԼ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ

Մանուկ մտավարժ Լի
Եւ հոգոյ բարոյ դիպեցալ,
Նոյն ոգով հաստատեաց զիս տէր
Մինչև յիմաստս հաստատեցալ
Հոգովն այն ուրախ եղէ,
Վայելուչ մտօք ծաղկեցալ
Զի նովաւ ծանեայ զտէր
Եւ նովաւ լուսաւորեցալ
Առատ անարգել եհնդ

Ձեր շնորհացն, որով յօրացալ,
Գրկամբ պարփակեաց գինն,
Փայփայեաց, որով փափկացալ
Աւազ «Թէ սիրէս զնա,
Գիրկս արկցէ զքև յարակալ»,—
Նա առանց սիրոյն իմոյ
Խանդակաթ փարէր յիմ վերալ
Աւազ «Մի ծախեր զդա
Կեփազու ոսկոյ սոփերալ,
Տերութիւնք և փառք այժմուս
Չամբառնա ի կշիռ դորա
Տապգիոն և յասպիս,
Կարկեհան, լալ և շափիւղայ՝
Յեռեալ ընդ համակ ոսկւոյ
Դէմ նորա ոչ վայելչանալ
Գանձք և մեծութիւնք երկրի
Բաղդատեալ ոչ արժէ զնա,
Ոչ ակն արևուն ծագմամբ
Համեմատ նորին լրանալ
Լուսատուք քեզ ցուցանեն
Ի ներկայս զոր երևանալ,
Իսկ նա ըզանցեալն քննէ,
Զներկայս և զոր յապագայ
Պատուականագոյնք երկրի
Պաղպաջունք, որ նշուլանալ
Եւ զարդք համօրէն զարդուց
Ահ նմա ոչ գեղեցկանալ
Տեսլութիւնք աչաց մարդկան
Եւ իմաստք, որ յառաջանալ,

Յիմարութիւն համարեալ
Եւ խաւար և առևանց նորա
Կազմեա քեզ քառամանեա կ,
Զպարահոցդ նովաւ զարդարեա
Քաղցր ի քուն լիցիս նովաւ
Ու յարթնութեան խօսակցիլ քեզ նա»
Բայց զպահպանակ նորա
Առընթեր եւ ոչ ստացայ,
Զշահ մընալոյն առ իս
Եւ զօգուտն ես ոչ իմացայ
Ծնողիաց աւետիք մատոյց
Զարարուեստ յանձն իմ ոչ կալաւ,
Եւ քաղցր արարիչն իմ չիս
Նայեցաւ, ես ոչ հայեցայ
Զչափ քաղցրութեան ընդ տեառն,
Որ առ իս բազում գութ նորա,
Թէ ոք ի համար ձգէ
Անքակ է ու անչափանալ
Թեպէտ այս Սողոմոնի,
Յորմէ զայս իմաստ վարժեցայ,
Ոչ կէս, ոչ մասնէբաժին
Խուն չափով ես չիմաւուտացայ
Այլ նա ի գիշեր օամու,
Ընդ լուսնիւ գոլ ժամանակեայ
Ես որդի եմ տրունչեան,
Ի հոգոյն լուսաւորեցայ
Զոր նա իմաւուտուն մտօք
Խօսեցաւ ամօք բացակայ,
Եւ յայտնի խաչին տեսայ,

Հաւատացի և խօսեցայ
Խաչեալ արքային է այս
Մարգարիտ, զոր ես ընկալայ,
Որ ասաց. «Խոզից մի տալ
Չար ախտից, որ չաղտեղանայ»,
Ծանեայ զմեծութիւն գանձին
Եւ զօգուտ արգասեաց նորա,
Ոչ միայն ի խըրատէս,
Այլ գործողացն, որ յայտնի կայ
Զքանքարն ի տեառնէ առի,
Ըստ առաւ պարգևաց նորա,
Ծրարեալ վարշամակաւ
Ծուլութեանս, որ յիս կայանայ
Ի գործարկութեան գանձին
Բնաւին ոչ ձեռնարկեցայ
Եւ հպարտութեան ախտիւն,
Սնապարծ մտօք փքացայ
Զոր տէրն շահել ետուր՝
Ընդաբոյս ինձ համարեցայ,
Առ ողորմութեամբ առեալն
Չարաչար կրիւք վարեցայ
Կարծէի ողորմութեան
Խլային, զոր զգեցայ,
Շահել գիատուցմունք վարձուն,
Զոր ծուլից յոյժ անկարանայ
Սկիզբն իմաստութեան երկիւղն
Աստուծոյ ասաց ւ ենթակայ,
Յանձին քո կալցես զնա,
Աւանդեաց՝ եւ ոչ ստացայ

Զառանց երկիւղ հանճարս
Գործածիւ ի չարն յօրանայ,
Ճարտար սպանող եղէ,
Հմուտ կենաց դիմակալ
Զի իմաստութիւնդ, որ կայ՝
Երկիւղիւն վայելչանայ
Թարց նորա՝ պատճառ չարի
Եւ պատժոց ունողին զնա.
Ինձ աչք ի գլուխս եդիր,
Յանբանիցն այնու յատկացայ,
Թէ միշտ ի վեր կոյս հայի,
Առ աստուած ես զայն չիմացայ
Արդ ես իմ երկրորդ կամաւս
Ի բարեաց գործոց հեռացայ,
Սիրող հեշտ կենաց եղէ,
Զէրդ անբան յերկիր կորացայ,
Իբր էշ լայնացեալ յաղբիւս
Ի կատակս թաւալեցայ,
Խոզից նմանեալ ի տիղմըս
Մօրիցըն շաղախեցայ
Խրատիչ ալոց արար,
Թէ յիւրմէ բանից զգաստանայ,
Զայն առիթ չարեաց առի,
Ես առ իս գիտուն ձևացայ
Միտք ծնեղական ետուր,
Թէ բարեաւ զմարդիկ որսայ.
Ի կամս ապաստան եղեալ,
Մտահաճ ինձ հաւանեցայ

Անգործ հաւատոց յուսով
Ի գլուխն իմ հաստատեցայ
Եւ միշտ սասանեալ մտօք
Հակակողմն խոտորեցայ
Ասաց «Լոյսդ որ ի քեզ կայ,
Պատրաստ կաց, չիասարանայ,
Զի թէ այդ նսեմանայ,
Արտաքինն որքան զօրանայ».
Ես գիշերատես մըտօք
Ի տըւէ խոր խաւարեցայ
Եւ երկմտութեան ալեօք
Յանկայուն հոգըս ծփեցայ
Տէրութիւն ետուր ւ ասաց
«Նախատպիդ դու միշտ ծառայեա»
Ծախեցի զանդրանկութիւն,
Որկորոյ հարճին գերեցայ
Կենարար հացին կերող
Ի տեառնէ ես վիճակեցայ
Եւ սեղանանենգ եղեալ
Սարտուցեալ ոգով սովեցայ
Զայս հունդ պատդաստեալ թռչնոց
Եւ խոզից ի քանէն լուայ,
Անյուսութեան կոյր մտօք
Առ փափաք ամին ծիւրեցայ
Ի կարգ կուսութեան մտեալ
Տգիտաց սուրբ և կոյս ցուցայ
Եւ գիրապարար մարմնով
Հոգեկան մասամբ պղծեցայ
Փակեաց ի կին մարդ չհայել,

Ի հեռուստ զայն ևս յակամայ,
Եւ թէ կամակար մտօք
Ծնացաւ անդրէն ընդ ևմա
Արդ հայել ծիրեալ մտօք
Ցանկութեամբ ես ոչ շատացայ,
Այլ պարծանս համարելով
Հեշտութիւնս խեղեշագայ
Անկասկած ի բնականս
Յանբնականս մտաբերագայ
Որով բնութեանցն տեառն
Ե մեծաց պատժոց գրեցայ
Ընդդեմ գործեալ արարչին
Եւ բնութեանս և դրութեանն սորա
Եւ ամենայն ստեղծուածոց,
Որ պահեն զեդեալ կարգ նորա
Որպէս թէ զամէն թողի,
Քրիստոսիւ ես ազատեցայ,
Սրծաթափրութեան ախտիւն
Ի յերկիր կարկամ կալեցայ
Սբբայի անուն առի,
Յաշխարհէ ձևով մերկացայ,
Զար մտօք մամոնայի
Եւ զարդուց սորին ցանկացայ
Որպէս խաչ ուսով բարձեալ
Խաչելոյն թէ հետևեցայ,
Եզանց և ագարակի
Եւ կանանց սիրով հեշտացայ
Արկայ սատրոտով հանդերձ,
Ժուժկալի կերպիւ յայտնեցայ

Եւ արագափութով
Ի բարի վարձուց ձանձրացայ
Հեզութեան լծով մտեալ
Համբերող խաչի ես ցուցայ,
Ի լուր քաղցրութեան խրատուն
Հարկութեան բոցով այրեցայ
Ննկողովրս կորահայեաց
Հեզ հարանցըն նմանացեայ,
Յանդուգն և նզգամ դարձայ,
Վէս, գոռոզ և խիստ անոպայ
Փորձութեանց ուրախ տանել՝
Յակոբայ արդարոյն լուայ,
Սնվիշտ յարտաքին կրից
Դիւական քախամբ տրտմեցայ
Ի կենցաղագէտ ծոյլ
Տատանմամբ տարակուսեցայ,
Գիտելով զելից շաւիղն
Օգնեա ինձ, ոչ բաբբառեցայ
Ծայրատուր սաղաւարտեալ,
Թէ այսպէս միշտ ի վեր խոկայ
Եւ զամէն պատող շնորհաց
Քրիստոսի փառացն վարկայ
Ես ոչ գործեցի բարի,
Նաև ոչ մտօք խորհեցայ
Եւ անափառիվ մտօք,
Շատ մաքրոց կարծիմ զերակայ
Իբր ի յերազի մտօք
Շատ բարեաց տէր երևեցայ
Եւ սին պարծանօք պատրեալ

Ի ծածուկ մտօք ճոխացայ
Ուղորդ աղուեսու ձագ եմ,
Այլ օձի խիստ նմանեցայ,
Յաղթող առիւծ կամ արծիւ
Բարձրամիտ կամօք շրջեցայ
Ուրար և փիղոն արկեալ,
Թէ լծովս խոր խոնարհեցայ
Եւ աճեղագոչ սաստիւ
Ի փոքունց վերայ բարձրացայ
Որպէս սգաւոր գոլով
Սեաւ հանդերձ անձամբ գունեցայ
Եւ սիրամարգի նման
Սիգալով փերևեթեցայ
Մէջ մարդկան փառաւորեաց,
Թէ զիարաց տուօղն իմանայ,
Առի զնա վաճառեցի,
Յղռամկաց լեզուաւ գովեցայ
Վերընթաց ճանապարհէն
Ինքնակամ ես սայթաքեցայ,
Ի վիմէն հաստատութեան
Պատրանօք չարին սահեցայ
Ի գերադրական գահէն
Կամակոր ես գլորեցայ
Եւ յաստիճանացն երից
Ծուլութեամբս իմով կապեցայ
Ո՛ւր ինձ վայել է, որ այժմ
Յուսմանէն մանկութեան թողայ,
Զկրկին դաշնաւորեալ

Ուխտս աստուածեղէն մոռացայ
Քարոզ օրինաց եղայ
Ի օրինօք անօրինեցայ՝
Անուամբս եմ այլոց քանոն,
Կանոնէն բընաւին յանցեայ
Կարծրացեալ անզեղջ մտօք
Աներկիւղ յօրինակեցայ,
Նման դարբընաց սալից
Խիստ բախմամբ ես ոչ թնդեցայ
Երևելի երկիտած
Եւ ցաւող յօրինաց վերայ,
Սաստիւ խրատող այլոց
Փեշէիէս կերպիւ ձևացայ
Ի միտս և յոգիս անսաստ
Ի ծածուկ խորհուրդս իմ, որ կայ
Զատագով փառաց իմոց
Կամապաշտ սրբոց դիմակայ
Անխրատ և ցոփ սրտիւ
Սնոտիս մոլեալ ցնդեցայ,
Անգաղ, աննիամեալ բանիւ
Վայրապար միշտ աղճատեցայ
Կատականս եպերանաց
Լկտաբար ծաղու թիւրեցայ,
Ի խայտ, խնդութիւն շարժել
Զամեն ոք ձեռնարկեցայ
Ռաբի, ռաբի յորջորջմամբ
Ինքնաշարժ փառամոլեցայ,
Ռամիկ ծառայից գեղջկաց
Ես անգամ ոչ նմանեցայ

Մարդահաճութեան ախտիւ
Առևրեաս առաքինեցայ
Եւ յառաձնական պահուն
Նաև ոչ մատամբ հպեցայ
Յարբաներկութիւն արբոց
Ի ծնօղաց ևս ընծայեցայ,
Միշտ ի արբութեան տեղիք
Առընթեր արբոց սնուցայ
Հիւծեալ հոգով և մարմնով
Տղմասիգ գուբըս փակեցայ,
Փոխան շնորհընկալութեան
Յօրինելոց զանեծս ընկալայ
Սուրբ վկայարանս կալով
Մանաւանդ յորըս շրջեցայ,
Գործնալ զանհաճոյս սոցա,
Վասն որոյ ևս ոչ արբեցայ
Նստելով ի տաճարի
Մեծամեծս բարբառեցայ,
Դատէալ ի բանից իմոց
Աւելի դատապարտեցայ
Փոքրիկ միմ գայթակղելոյ
Խոր ի ծովս հրաւիրեցայ,
Իսկ ևս բիւրոց կործանիչ,
Որ մեծ պատժոց գրեցայ
Սնաւակ և թիւր գործովք
Ի յարկի տևառն բազմեցայ,
Այն պղծոյն անապատի
Արդարև յոյժ նմանեցայ
Շինեաց զերդ միեղջերու,

Թիւրակէս եղ զիմաստս ի սմա
Փոխ արկմամբ յեղջիւրըն փոքր,
Առ բարձրեալն մեծ խօսեցայ
Հանդիպողք այսմ բանիս,
Որ վասն իմ գործոց խօսեցայ,
Մեղադրէք յանդրնգնութեանս,
Որ առ վատ անձն իմ մատուցայ
Սաէք անպատեհ մարդկան,
Մանաւանդ վարժողաց վերայ,
Այլ ի գէթս, որ ես անկայ,
Մի՛ լիցի որդոցս Ադամայ
Տէր, տէ՛ր, մեծ, սուրբ և արդար,
Զիս կարդալն խիստ ճեշտացայ,
Դեռևս ոչ յայսմ պատուոյ
Բոլորով սրտիւ գոհացայ
Ի փառաւորելն զիս
Զմարդիկ ձգել փութացայ
Եւ վեր առաքել զփառս
Ի ժամուն ոչ ևս գոհացայ
Բիւրուց քանքարաց տուժից
Ծնորհողին պարտական գտայ,
Զունիմ տալ կշիռ մ ունելի,
Ոչ ծանօթ ընտրեցեալ նորա
Բայց ոչ լքանել պարտիմ
Ի յողորդ յուսոյս, որ առ նա,
Որ մինչև չէի եղեալ
Կամեցաւ, և ես գոյացայ
Ի մօր իմոյ յարգանդէ
Ի յաւազանէն առ տէր անկայ,

Գիտէր զիմ արդեաւն դիպուածս,
Թէ վասն էր չկորոյս յանկնայ
Այլ քաջալերեալ պարծիմ
Մեծամեծ երախտեօք նորա,
Որ վասն իմ ի կուսէ ծնաւ,
Տնօրինեաց ի յերկրի վերայ
Հանգիստն ամենայն հոգոց
Չարչարեալ այլ ոչ յակամայ
Եւ կեանքն զուարթ արար,
Վասն մեր խաչիւ մահանայ
Զի ամեն խակութիւնք աշխարհի
Եւ ծննդոց սուրբ բառնաս,
Ընդ լծոյ խաչին ոչ զօրէ,
Այլ ոչնչանայ
Այլև բարեխօս բարի
Միշտ սուրբ կոյսն, որ հանդիսանայ,
Վասն ամէն քրիստոնէի
Եւ վասն իմ, որ կայդամս առ նա.
Արդ, տէր իմ, Յիսուս Քրիստոս,
Քեզ և որք քո ընտրեալ ծառայ
Զայս յայտնի բացադրութիւնս
Իմ կամաւ խոստովանեցայ
Առաջի քոց հրեշտակաց
Եւ սրբոյ կուսին գերակայ
Եւ ամենայն հաճոյից
Ընտրելոց յորդոցս Աղամայ
Զի քո անբաւ գթութեամբդ
Եւ բուրմամբ աղօթից նոցա
Թողութիւն գտայց աստէն,

Մնալով շնորհիդ առ յապայ
Փա՛ռք քեզ, փրկիչ աշխարհաց
Եւ հոգւոյդ ընդ հօր յարակայ,
Պատիւ այժմ և յաւիտեան,
Օրհնութիւն և ալէլուիայ

6. ՈՂԲ ՎԱՍՆ ԱՒՄԱՆՆ ԵՐՈՒՍԱղԷՄԻ

Ի հոլովել ժամանակին,
Եւ մերձենալ աւուրց վերջին,
Յորում սպառաւ փոքր այն բարին,
Զոր առաջինքն գործեցին,

Նուազեցաւ Հռոմայեցին,
Եւ զօրացաւ Հագարացին,
Քաղդէացին և Քետացին
Եւ բուն ծառայն Քանանացին

Գեղօք և քաղաք յուովք առին,
Քրիստոնէից շատ տիրեցին,
Զաւերս նոցա զօրս արարին՝
Ճառել չկարէ ոք երկրածին

Ի տիրութեան Տաճկաստանին,
Յաւուրս պղծոյն Սալահադինի,
Զօր գումարեալ չու արարին,
Ի սուրբ քաղաքըն դիմեցին

Բանակ առեալ զՅորդանանաւ
Եւ բազմութեամբ զոաշտըն լցին,
Թուղթ սրձակեալ առ Ֆրէդրին՝
ՅԵրուսաղէմ սուրբ քաղաքին

«Եկայք ի մեր հնազանդութիւն
Ծառայապէս ներքոյ ձեռին
Եւ կամ ելեք պատերազմաւ,
Ըստ օրինի քաջամարտին»

Ֆրէդրք եկեալ խորհուրդ առին
Ձեռն տալով յոյսըն վերին,
Հռոմայական մեծ հրամանաւ
Խստիւ ետուն զպատասխանին

«Թէ մեք կուիլ ունիմք ընդ ձեզ
Եւ հալածել յանվայր վայրին
Կամ թէ և մաճ հասանիցի
Ի սէր ողոյս սուրբ քաղաքին»

Ամէնքն ի լաց ւ ի յողք մտին,
Յեկեղեցիս դիմեալ գնացին
Զայնք օրհնութեանց րազմանային,
Եւ պաղատանք յերկարէին

Մշտամոունչ աղօթէին
Եւ հանապազ ոեծեծէին,
Պատրիարգունք և քահանայք
Պատարագաւն հայցէին՝

Թէ «Օգնութիւն մեզ ի տեառնէ
Էկեալ հասցէ որպէս նախկին
Սակաւաձեռն այսու արամբք
Յաղթեմք զօրաց մեծ ըռազմին»

ԶՌահի բրինձն գլուխ եդին
Զօրուն փոքու ի հանդիսին,
Ութհարիւր երիվարաւ
Եւ նոյն չափով հետևակին

Հաղորդեցան մարմնոյ փրկչին
Եւ սուրբ խաչին երկիր պագին,
Զուէրունական խաչն հանին
Եւ առաջի անկանէին

Զտիւն և գիշերն ի յողբ կացին,
Մինչ արտասուօք զհողն թացին
Զեղև ընշան սուրբ նախկին
Ի ոչ պատասխան ողբոց նոցին

Յորժամ ի թուրքն դիմեցին
Խաչն յաջմէ կանգնէր նոցին
Թէպէտ և յոյժ սուգ արարին,
Ոչ շարժեցաւ բնաւ տեղին

Պատրիարգաց յուշ առնէին
Եւ իմաստնոց հարցանէին,
Ոչ կարէին պատասխանել,
Զի հասեալ կայր վճար վերջին

Ջերապօլսոյ կոմսին Բարդին
Այն հենգաւոր խէթ տղունին,
Իսկ նա մեկնեալ էր սուրբ յուխտէն
Եւ դաշնադիր էր ներհակին

Որպէս Վասակ՝ հայոց ազգին
Եղև մատնիչ սուրբ իշխանին,
Սոյնպէս և սա՝ Ռահ բրնձին
Եւ միամիտ զօրաց նորին

Թուղթ առաքէր Սալահադնին,
Զինքըն ծառայ գրէր նմին
Եւ նշան տայր զքաղանց դրօշին՝
Զզարդըս նոցա առնել դեղին

Ասէր «Բաժնեմ զզօրն փռանգին,
Եւ զքաջքն առնում ի յիմ մասին,
Գամ, իջանեմ ի վերայ ջրին,
Զնոսա պահեմ ի յերաշտին»

Եւ նա արար, զոր խորհեցաւ
Ընդ մտերիմ զօրականին
«Պահէք,— ասէ,— զաջոյ դեհին,
Եւ ես պահեմ զմուտ ջրմղին»

Յանկարծակի մէջ գիշերին
Այն թշնամեաց գունդն հասին,
Բանակ առին ի վերայ ջրին,
Ըստ խրատու այն պիղծ կոմսին

Անդ լուսանալ առաւօտին,
Մուտս ռազմի յօրինէին

Տեղի ետուն նենգաւորին,
Ըստ նշանի դրոշից նորին

Գազանաբար յարձակէին
Վերայ զօրաց քրիստոնէին,
Իսկ նոքա ոչ թուլանային,
Այլ քաջութեամբ խիզախէին

Ուժգին բախմամբ հարկանէին
Զմոխրատեսակ կեդարացին,
Մինչ անկեղոցն ի հանդիսին
Դիաթաւալ խիտ խաղային

Զաւուրս երիս անդ յամէին
Արիական զօրք Ֆռանգին
Այլ էո ի տօթ ժամանակին
Վարդավառի չորեքշաբթին,

Յորում քարինք շողանային,
Եւ կրականայր փոշի երկրին
Սաղաւարտիւք և զրահիւք
Պարսանեղեալ անդամք նոցին

Ի սաստկանալ տօթոյ ջերմին
Վառեալքն երկաթսն ալրէին
Եւ յանջրդոջ տօթոյ տապին
Յոյժ ծարաւեալ պապակէին

Քաջամարտիկքն թառամէին
Եւ ի ներքուստ ցամաքէին,
Մինչ թալկեալ ամէնեւին
Եւ ի յոժոյ թողել բաւին

Ապա զիշխանն և զիւր որդին
Կալեալ ածին ի յատենին
Հարցափորձեալ ճենգաւորին
Ի յուրացութիւն որսայր զնոսին

«Թքել,— ասաց,— ընդդէմ խաչին
Եւ ճաւանիլ փեղամբարին»։
Չճանդուրժեալ նահատակին՝
Քրիստոսասէր թագաւորին,

Թուք արձակեաց յերես պղծին
Յանպատուութիւն կուռդ Մահմետին
Ի կատաղել Սալահադնին
Զնոսա որպէս զոչխար զենին,

Զպատրիարգունքն և զՖրէրնին
Սրով իսպառ կոտորեցին
Զխաչն ի յոտից արկին,
Զոր սերովբէքն սարսէին

Եւ զմնացեալ զօրականին
Ծորտ և ծառայս գրաւէին,
Ի ծախ արկեալ վաճառէին,
Ընդ Ասիայանն յուղարկէին

Ի սուրբ քաղաքն դիմեցին,
Զօրօք պատեալ պաշարէին,
Ի սուրբ խաչի մեծ ուրբաթին,
Ի վեց ժամու մէջօրէ ին

Խուար կալաւ զամենեսին,
Հանց որ աստեղք երևէին,

Պայծառ արևն ի սուգ եմուտ,
ԵՒս կորստեան քրիստոնէին

Յառ և յաւար սուրբ քաղաքին,
Զոր պղծալիցքն կոխէին,
Եւ ուր սրովբէք թևասքօղին,
Յոյժ անարժանքն այսպանէին

Զնշանք լուսոյն զոր գտին,
Ոտից կոխան զայն առնէին
Զկուսան կանայք հաւատոյին
Եւ զտղահասակ մանկտին

Վերի առեալ ժողովէին
Եւ յընտրութիւն պարապէին,
Իւրաքանչիւր բաժանվին
Ի ի Բաբելոն յուղարկէին

Եւ Յարութիւն մտեալ փրկչին
Գերեզմանաւն շրջան առին,
Զապաստարքն սուրբ տեղեացն
Անդրէն զեղեալ փողոտեցին

Ի տաճարի տեառն մտին,
Ի սրահին Սողոմոնին,
Զատակս տանն, այլև զորմանեւ
Քրիստոնէից արեամբ լուացին

Այլև կարգեալ իւրոյ ազգին
Զմտանել անդ քրիստոնին
Եւ կայ մնալ կտակ պղծին
Սինչև ցայսօր ժամանակին

Զսուրբ Սիոնն ու զծնունդն
Է ւ զամենայն ոխտատեղին
Նախատանօք այսկանչին
Եւ գարշ ոտիւքն կոխէին

Զօրհներգութիւնք մարգարէից,
Զոր սուրբ հոգին առթեր նոցին
Եւ զկտակարանն առաքելոց
Տնօրէնութեանցն պատմողին

Խավիաեցին, լռեցուցին,
Չի կարգեսցեն զխաբեբային,
Զմսհաւ Ղուրանն ընդ Ֆրղանին
Չեքբար ալլահն անդ ճչին

Զզարդ և զսպասաք սուրբ տաճարաց
Պեղծ մզքթացն ձօնէին
Եւ զիանդերձանք սլատմուճանին
Կալեալ յինքեանս բաժանէին

Ի բարձրութիւն ելեալ բեմբին
Զնև մկհրապին ևկարէին
Եւ առաջի անկեալ նմին
Յիւրեանց բախտէն գոհանային

Զայս ձայն գուժի աղաղակաւ
Ի Հռոմ քաղաքն հասուցին
Պապըն լուեալ ի խոր խոցէր
Եւ ամենայն սեպուհք նորին

Իշխանք ւ ազատք ժողովէին
Հռոմայեցոց պայազատին,
Սպանիացին և Փարէզին,
Գլամանիկն և Վէնէտին:

Ժողով առեալ բանակէին
Ի ւ բօթատու միմեանց լինին,
Թէ «Պարծանաց մերոյ տեղին
Եւ ոտնակոխ կենդարարին,

Կոխան եղև անարժանից
Մահմետական չար ժողովին»
Վասն այն ի տուք անհնարին
Եւ ոտնակոխ կենդարարին,

Կոծով հարեալք լինէին
Յեկեղեցիս և առտնին,
Աւաղական ձայնիւ լային,
Հեծեծանօք հառաչէին

Զգարդ հանդերձից իշխանական
Փութով ի սեաւ փոխարկէին,
Սո փողոցեաւս թաւալէին
Եւ ընդ ցանկիւ տապալէին

Ասյա խորհուրդ ի մէջ առեալ
Ելանելոյ ընդդէմ տաճկին,
Ջեռն ի գործի արկանէին
Եւ լաւտափայտս որոնէին

Նաւս քագումս կազմեցին
Եւ մարտակառս յօրինեցին
Ծոխ թագաւորն Ալամանին
Հարեալ յաղէտ կսկծագին,

Ասէ «Գնացէք, հալածեցուք
Զթշնամիս սրբոյ խաչին,
Այլ թէ և մահ պատահեսցէ,
Ուկերբս անկցին ի սուրբ երկրին»

Զու արարեալ վերայ ծովին,
Ողնորեալ կապոյտ դաշտին,
Մի զմիով արշաւէին
Եւ խրախուսեալ խիզախէին,

Թէ՝ «Մարտիցուք մեք տիրապէս
Ջանիւն մարտիրոսին
Եւ թէ յաղթեմք զթշնամին
Վրիժառու սրբոյ խաչին,

Մեծն Պետրոս ընդ մեզ գայցէ,
Զունկն կտրել զՄաղքոսին,
Որում յանձնեաց հօր սիրելին
Զսուրբ գառինս իւրոյ հօտին»

Այլ բանսարկու չար թշնամին
Նախանձ հարեալ զյունականին,
Զգայուագեղ ճանապարհին,
Ալեաւ ուժով քոնանային,

Մինչև ի սուր արկեալ զնոսին
Է և զապստամբքն ի սպառ բարձին
Ապա յաջող ձեռնարկութեամբ
Ի Տրապօլիս եզերեցին

Այն ձախաձեռն աղեսն հին
Կենդիո լինէր գործոյն կրկին,
Մինչև երդմամբ մեծ ուխտեցին
Չառնել վնաս երբեք նմին,

Թէ օգնական լինի գործոյն
Եւ ինարէ զմուտ ռազմին,
Եւ ձա ուխտեաց թագաւորին
Ծառայ լինել յաւետ նմին

Եւ առաջնորդ յերբ խնդրեցին,
Զտուկն ետուր զամաս չարին,
Այլ պատուիրեալ Էր ձա նմին
Տանիլ և տալ ի սուր տաճկին

Յերբ որ հասան ի Տաճկաստան
Ամապարեալ եղև տուկին
Ղօղեալ թաքուն ի յիւր տելին,
Առ ձենգաւոր խաբող կոմսին

Տարակուսեալ զօրականին
Չաւուրս քսան յանջուր դաշտին
Եւ առ սովին և ծարաւին
Վերայ տաճկին արշաւեցին.

Անցեալ հասին յերկիր Ուճին,
Անթիւ հեծեալք րնդդէմ ելին
Շրջան առեալ յարձակէին
Որպէս զգայլ ի վերայ գառին

Այլ թագաւորքն և զօրք նորին
Կական բարձեալ ի ձայն ուժգին,
«Սատուա ծ, յօգնել մեզ փութացիր
Եւ յընկրկել քում ծառային»

Ապա ի մարտ մտեալ լուսով
Վաճեալ հարին հալածեցին.
Երկու մարտիկ ի մէջ գնդին
Զարմանալով գործ գործեցին

Իբրև զիւր ընդ եղեգին՝
Հատեալ զոազմն անցան ի ին,
Գոռալին, խիզախէին,
Բազումք լաճէ սատակէին

Իւրաքանչիւր հազար ւպանին
Այլև զբիւրս փախուցին
Սուլտանն երդուաւ ընդ Ֆռանգին
Հնազանդիլ Հռոմայ գահին

Ապա դարձան ի Սէչերկրայս
Ստ Լևոնաւ թագաւորին,
Անտի դարձան յԱնտիոքին,
Առ Զհանայ գետովն իջին

Ի յողողիլ մտեալ արքայն
ԵՒ մեռանէր ազգմամբ չարին
Զորդին ի տեղն կարգեցին
Եւ թագաւոր հաստատեցին

ՅԱքայիոս վերայ եկին,
Պատնէշ կանգնեալ պաշարեցին,
Ե ւ անտանօր արքայորդոյն
Օրհաս մահու հասանէին

Թէւկէտ և չերմ էր սէր նոցին,
Այլ մեղքն մեր ոչ թոյլ տային
Ի զօրանալ քրիստոնէիին
Եւ կորանալ այլասեռին

Յետոյ այլ ոմն յազգէ նոցին
Ընկլէզ անուն երևելին,
Ազգմամբ հոգոյն գայր յօգնութիւն,
Նաւօք ելեալ Կիպրոս կղզին

Տեսեալ զչար բարս նոցին,
Մատնեաց ի սուր զամենեսին
ՅԱքայիոս վերայ եկին,
Յուրախութիւն մեծ բանակին

Տօն ցնծութեան կատարէին,
Զսուգն հին փարատէին
Եւ յետ աւուրց ինչ հանգստին
Վառեալ ի մարտ ընդ քաղաքին

Զքառասուն հազար տաճիկն
Հանեալ արտաքս կոտորէին
Յետ այսորիկ չու արարեալ,
Սալահադինն դիմեցին

Տեսեալ զանթիւ զօրս տաճկին,
Սակայն յուսոյն ոչ կասեցին,
Այլ յուսացան ի սէր փրկչին
Եւ յօգնութիւն սրբոյ խաչին

Փոյթ ի վերայ յարձակէին
Եւ ուժգնակի խիստ բախէին,
Զքանակն յերկուս բաժանէին
Եւ զաջողակքն մաշէին

Զնալահադինն փախուցին,
Մինչ յԱսխալանն հասուցին,
Զօրս ընդ ձեռամբ կոտորեցին
Եւ զոր պրծեալ՝ կորացուցին

Ուրախութեամբ դարձեալ անդրէն
Ի յԱիաբաթ ամ մի կացին
Եւ վասն առման սուրբ քաղաքին
Տեառնէ հրաման չեղև նոցին

Վասն այնորիկ նաւեալ անցին,
Փութով յաշխարհն իւրեանց գնացին,
Մինչև հրաման աստուածային
Տացէ զնա դարձեալ նոցին

Այս խորհրդով կան և մնան
Նոքա ելից ժամանակեաւ,
Մինչ յաստուծոյ առցեն հրաման
Եւ երամով գան միաբան

Այլ թէ վասն է՞ր այս գործեցան,
Որ քրիստոնեայք նուազեցան,
Այս է պատճառն յայդ յանդիման
Ի սուրբ գրոց վկայել բան

Թէ ոչ կամի աննման արքայն
Զիւր սիրելին ամբարտաւան
Յառակն ասաց սողոմոնեան
«Ես եմ դիմակ այնպէս մարդկան»

Վասն այսորիկ զքրիստոնեայն
Այլաւեդից արար կոխան,
Զի հնզ բարուք ծառայական
Սուղ ինչ սգով ապտէն ոլբան,

Զի իրաւամբք արդարութեան
Անդէն առցեն զաստիս փոխան
Ճոխս վայելել ոլրախական,
Փայլեալ ի փառս անզուգական

ԵՒ այլ պատճառ տեառն ցասման,
Որ հրաւիրակ պատժոց գտան,
Ծովսն մեղաց մեր բազմութեան,
Որ ի բարձունս բարդեցան

Զի մեծ ոճիրք չարութեան
Ի մէջ ճօտիս յոյժ բազմեցան,
Զի ներձուածով բաժանեցան
Եւ իրերաց դահիճ դարձան

Հայհոյութեամբ բացեալ բերան
Քրիստոնէի առ քրիստոնեայն,
Նրով միմեանց յերկիր ելան
Եւ գերէվար արբոց յարեան

Այլև նախճիրս զանազան
Եւ անառակ վարս ստացան,
Վասն որոյ թիւք կատարեցան,
Կշռեցան և չափեցան,

Եհաս լրումն վերջական
Ըստ քանակի գործոց մարդկան,
Բայց ըստ կամացն աստուածական,
Զոր նախ տեսաւ յարարչութեան,

Ի միջն Ադամ զորդիս մարդկան
Ի սկզբանէ մինչ ի վախճան,
Դևո անկատար, ոչ ի լրման,
Թերի մնացեալ, նոր ի ծննդեան

Զոր ըստ մասին ումանց մարդկան
Խիստ տերութեանցն արար վախճան,
Զի չար կրիւք ծառայական
Տատանելով հեծեծական

Եւ զկէնցաղոյս մէր ապագայս
Փոխեն սէրն անանցական,
Զի երևի սիրոյն նշան,
Այն գործոցն բարութեան

Իսկ աշխարհի որդիքս, որ կան,
Հողոյ ծնունդ եղեմական,
Ժառանգեսցեն յայսմ յաւիտեան
Եւ յապագայն խաւար մնան

Յամենայնի, որ գործեցան
Փառս տացուք փրկչին մարդկան,
Հօր և հոգոյն իւր էական
Միասնական աստուածութեան

7. ՆԵՐԲՈՂԵԱՆ ՎԻՊԱՍԱ[ՆԱ]ԿԱՆ Ի ՓՈԽՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԿՈՒՍԻՆ ԵՒ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԻՆ ՍՐԲՈՅ, ՈՐ ԲԵՐԵԱԼ ՀԱՆԳՈՒՅԱՒ [Տ]ԵՍՉՈՒԹԵԱՄԲ ՀՈԳՈՅՆ Ի ՍԱՀՄԱՆՍ ԱՆՁԵՒԱՅԵԱՅ, Ի ՏԵՂԻՆ ԿՈՉԵՑԵԱԼ ՀՈԳՈՑ ՎԱՆՔ

Աստուած և տէրն ամենայնի
Եւ արարիչն արարածի,
Որ էրն և է և եղիցի
Եւ յանքաւիցս ոչ պարագրի

Ահեղանկարն աշխարհի
Եւ գաղափար բնաւ գոյի,

Կ երակատար բունն բարի
Եւ համաւսիւռ ճաճանչն արփի

Որ մինչև չէր նկարն երկնի
Եւ անհաստատ հիմունք երկրի,
Փառաբանիւր անդրեվի,
Երրորդութիւն անճառելի

Իսկ անկարօտն յամենայնի
Եւ կատարեալ էն առաջի,
Ի յոչ էից է երկակի
Յառաջ մատոյց զնիւթս Էակի

Ջեթերև վերին կմբլթ յերկնի,
Ջնոյն և հիմն յատակի,
Ջմիջոց ծոցոյ այսմ անբաւի,
Որ պարառեալ են քառակի

Լուսապարար շարս կարգի,
Ջի լուսատու լիցին յերկրի
Ջգալականաց վայելչալի
Եւ տնկական բուսոց բերրի

Հսկան հզօր յարաշրջի,
Յորոյ տապէ ոչ ոք թաքչի,
Դաստիարակ զրւարթ գիճի
Շնչականաց և անշնչի

Նոյն աստուածօր աստ հիմնարկեաց
Զեկեղեցի իւր զոր փրկեաց,
Խառնեալ սեղան արեամբ ներկած
Ազատ յալեացն, որ մորկած

Ընդ պաղպաջուն լուսատրաց,
Որով անդրէն զնա զարդարեաւ,
Ետ զիշատակ սրբոց վառեաց,
Գեր քան զնա փառաւորեաց

Զորս քան զաշխարհիս յառաջ ընտրեաց
Զմարգարէից և զնախահարց,
Զհայրապետաց, զմարտիրոսաց,
Մաքուր կուսից կրօնաւորաց

Որք ընկալան զբանն կենաց՝
Մաքուր մօրէն մեր փրկանաց,
Իւր ողջ խոկումն է կուսանաց,
Չափ և քանոն առաքինեաց

Զի որպէս մեծն յաստեղաց
Ճոխ յասպարէզն յարատևեաց,
Սա զերկնային լոյսն տնղեաց
Զմեգ մթոլեան ի մէնջ եբարձ

Որ և թեթև ամպաւ չուեաց
Ընդ կենցաղոյս այս ծովընթաց,
Հողմով հոգոյն վարեալ թևեաց,
Վեհ երևնալ վերնականաց

Նաև այս գնդմ ի տուրք գառանց,
վայր հայրաբուղխ կրկին վտակաց,
Զովացուցիչ պասքեալ ազանց
և լուացումն անքուր մսնկանց

Այս ծաղկազարդ տուրք գառազան
Ի յարմատոյն բղխեալ Դաւթեան
Եւ գան երկուցն պետութեան
Յանգեալ ի պետն տէրութեան

Զի մինչ ի քոյսն արդարութեան
Երեք կղեալ ի խառնման,
Նախ Ահարոնն Վևտական
Կալաւ զդուստր Ամինադաբայն

Եւ Յովիդէ մեծ քահանայն,
Զդիւցազինըն Յովրամայն,
Իսկ Յովակիմ զարմըն Դաւթեան
ՋԱննա էառ զդուստր Մատթայն

Զքոյր Սովիէ և զՄարեմայն,
Ուստի բուսաւ ոստն անճման,
Յորմէ զիսայրին կթեաց Ադամ,
Զամբեալ եկաց ի յաւիտեան

Որ ի լեռն երից ամեան
Զայնեալ եղև տէրն յանդիման,
Բարձեալ թողու զերդ ճէ Եսայն
Տէրն կալաւ ճօրրն փոխան

Իսկ ի յամին չորեքտասան
Ծերն պարկեշտ եղև պաշտպան,
Կնքեալ նաման անպարգական,
Տուաւ առ առն գիտնական

Որ յետ երից ամսոց լրման,
Մինչ ճարտանեացն կայր խոկման,
Առ զաւետիսն կուսական,
Սիրով ճարեալ ճարսն առ փնսային

Զոր ի յաւուրն փեսայութեան
«Եղէք,— ասէր,— դստերք համայն,
Ընդ Սողոմոնն հայել արքայն
Պսակաւորդ ի Գողգոթայն»·

Այլ որ աճեղ անդ որոտայր,
Թողոլ նոցա առ ճայր կարդայր,
Զկոյսն կուսին յորդէգիր տայր,
Կտակագիրն, որ ընդդէմ կայր

Եսայիաս հոգով խայտար
Զայս նախագրէր այլանկար,
Յայր մի տըլաւ ծաղեալ տումար,
Որ դպրութեան ոչ ճմտանայր

Եւ որ վանեաց զչարին ճնար
Զոտոխն մեր դատեալ արդար
Կարմրազգեստ, ճնձանաճար,
Փառօք առ ճայր վեր ճամաբառնայր

Յայնժամ մատեան մայրն և ողբայր
Ժտեալ յորդոյն ամենակար
«Դու համբառնաս ի փառս անճառ
Եւ զիս թողուս պանդխտաբար»·

Նա խոստացաւ յոյժ կամակար,
Թէ ոչ թողից յերկիր օտար,
Այլ ես ածից զքեզ առ հայր
Եւ զնիւթականըդ շաղաշար

Ապա զչետոյսըն մ[ո]ռանայր,
Յառաջադէմըն սլանայր,
Յանցաւորէն քակիլ ջանայր,
Զի ընդ անանցն միանայր

Ամաց վաթսուն յերկրի մնայր
Ընդ մկրտեալսն որպիսանայր,
Փոխանորդաւ որդոյն գնծայր,
Բայց անդրանկան սիրոյն ըղձայր

Երկուտասան ամըք լցեալ,
Յօրէ յորմէ տէրն ամբարձեալ,
Սպա վերնոց պետին իջեալ,
Զբրաբիոնն ոստ մատուցեալ

«Ե կ, մերձաւոր, ձմեռն անցեալ,
Ահա այգիս մեր ծաղկեցեալ,
Յատանելոյ ժամն մերձեալ,
Զայն տատրակի աստ հնչեցեալ»

Յայնժամ և կոյսն ուրախացեալ
Զմաքուր կուսանս անդ կոչեցեալ,
Զանուշ բերանն իսկոյն բացեալ,
Ի սուրբ պատուէրս առատացեալ

«Որք սուրբ հոգոյն էք հարսնացեալ
Եւ սրբութեան ուխտի կացեալ,
Արի ի ճոյն լիջիք դարձեալ,
Առագաստին լապտերք լուցեալ»

Սուրբն Յոհաննէս լառաջ մատևալ,
Ընդ մօր գթոյն խանդաղատեալ,
Նա զլալտնութիւն իրին պատմեալ
Եւ վասն եղբարցն թէ կարօտեալ

Այլև ընդ այսմ ամենայնի
Պարտիմք գիտել զսոյն յայտնի,
Զեղեալ գրեալ սքանչելի,
Որ ի ևնջումն Աստուածածնի

Զի Լ գրեալ Յովհաննիսի
Եղբօր սրբոյն Յակոբոսի,
Սւետարանիչ տէրն Յիսուսի
Րդի եղեալ Զեբեդոսի

Յորժամ փոխիլ մօտեալ աստի
Մարիամու մօր կենսատուի,
Երանւն աւուրքք լառաջ լինի
Գալ հրեշտակին Գաբրիէլի

Եւ խոնարհեալ երկրպագի
Տէրն ծնօղի Մարիամի
Եւ աւետեաց որդեալի
«Բերկրեալդ ի յազգս Եւաի,

Զի կոչէ զքեզ տէրն ամենի
Յիսուս որդին քո սիրելի»
Ւ ետ նմա զպսակն յայտնի՝
Զբրաբիոնն հրաշալի,

Որ ի յոստոց արմաւենի
Հիւսեալ ընտիր զարմանալի,
Զոր էր բերեալ դրախտէն մեծի
Եւ եդ ի գլուխ սրբոյն կուսի

Զի առաքեալք տեսցեն յպտոնի
Եւ օրհնութիւն տան առաջի,
Հօր և Որդոյ և սուրբ Հոգւոյն,
Ստեղծչին գոլից ամենայնի

Եւ զի նշանք լիցին հրաշի
Ի պսակէն բրաբիոնի
Եւ զօրութիւնք բժշկութեան
Առ ի տեսիլ աքահչելի

Իսկ սուրբ կուսին Մարիամի
Իբրև Լաո աւետալի
Չփոխիլն աստէն առ տէրն երկնի
Յուրախութիւն ահճառելի

Եւ զբրաբիոնն պահանջի
Վասն իւր բերեալ բիւր բարելի,
Եւ օրինութիւն տէրն Յիսուսի
Ելս ի մտի եդեալ աստի

Նլեալ ի լեառն Ձիթենեաց,
Չի անդ կացցէ ի յաղօթի
Ւ ւ անդ եղև հրաշս յայտնի
Ի յաղօթելն Աստուածածնի

Չի ամենայն բոյսք դալարի
Եւ տունկք ծառոց անդ խոնարհի,
Առ ի յողջոյն արքոյն կուսի
Երկրպագեն մօրն Հիսուսի

Ւ ւ յաղօթելն Աստուածածնին
Այսպէս ասէր յիւրում սրտին
«Դու, տէր, իմ տէր, Յիսուս որդի
Եւ աստուծոյ հօր հզօրի,

Դու խոստացար գալ ի յերկրի
Ւ ւ զիս հանել յերկինս երկնի
Եւ քո խոստումն է բաղձալի
Անտարակոյս ւ անստելի»·

Յայնժամ Յիսուս յերկնից ձայնեալ
Առ սուրբ կուսին խաւնդալատնալ
«Մի երկնչիր, մայր արբասնեալ,
Ես գամ առ քեզ կատօք բազմեալ

Եւ ոչ թողից զծնողդ օրինեալ
Ի կատարել զիմ խոստացեալ,
Այլ աւանդեմ զհոգիդ մաքրեալ
Ամբողջ մարմնովդ վեր ամբարձեալ»

Եւ յետ բանիցդ աւետեալ
Մարիամու նոյն յարուցեալ,
Զերիս աւուրս շրջագայեալ,
Զտնօրինականս փրկչին եղեալ

Եւ յամենայն տեղ աղօթեալ,
Փափագանօք ողջագուրեալ,
Դարձաւ ի տուն իւրոյ եկեալ
Եւ ի գահոյսն եղև բազմեալ

Ապա Յոհան որդին եղեալ,
Որ քարոզէր զՔրիստոս օծեալ,
Ի մերձակայս Պաղեստինոյ
Գետոյրէից շրջագայեալ

Անտէն դարձեալ առ կոյսն ակեալ,
Զոր էր յաւանդ ընդին տեալ,
Որ և կուսին յայտ արարեալ,
Վասն փոխման իւր հանդերձեալ

Այլև զտեղի իւրոյ թաղման
Ի հայրենիսն իւր ասացեալ՝
Գեթսեմանի ձորըն կոչեցեալ,
Որ էր շիրիմ ծնողացն եղեալ

Եւ ասացեալ Յովհաննիսին
Մատչել յաղերս սուրբ խորհրդին,
Պատարագել զտոսկային,
Զի հաղորդիմ մարմնոյ փրկչին

Յայնժամ ելեալ սուրբ Յոհաննին
Ի վերնատունն խորհրդին,
Յիշատակել ըստ տեառն բանին
Վասն իւր ծնողի Աստուածածնին

Յայնժամ հոգին մատակարար
Գնդին սրբոյ ազդ արարեալ,
Որք փոյթ ընդ փոյթ անդ գումարեալ
Եւ ձայնակից ձմին եղեալ

Որք ի հոգոյն վերաբնեալ
Յանկարծակի եղեն եկեալ,
Դասք երջանիկ սպետից ընտրեալ,
Որք յամենայն յաշխարհ գնացեալ

ԶՔրիստոս աստուած քարոզէին
Եւ զյարութիւն պատմէին,
Ի նոյն ժամայն անդ գումարին,
Որք ընդհանիւր ապեալ էին

Պետրոս ի Հռոմայ,
Այլ և Պօղոս էր ընդ ձմին,
Թովմաս ի Հնդկային
Եւ Թադէոս Հայոց Մեծին

Փիլիպպոս ի Հաբաշին
Եւ Մատթէոս Սիւրային,
Անդրէաս ի Սպարտայոյ
Լ ւ Շմաւոն Մովրիտային

Յուդայ յՈրմոյ եկաւորի,
Մատաթիաս Փռիւգային,
Մարկոսն սուրբ Թեբաիդոյ,
Ղուկաս եկեալ Դաղամատային

Եւ այսպիսի սքանչելի,
Որ չէ եղեալ յազգ մարդկային,
Զի պասունք ւ եօթանասունքն
Յանկան քթթելն եկեալ հասին

Եւ յարձակման պատարագին
Ի կատարման սուրբ խորհրդին,
Երկիր պագին աստուծոյ մօրն,
ԶՅիսուս աւանդն ողջոյն տուին

Այսպ զմիմեանս համբուրեցին
Յողջոյն սիրոյ կենարարին
Եւ գոհութեամբ աստուածային
Հիանալով զարմանային

Լ ւ օրհնեցին զաստուածն միև
Ի հաւաքումն ի հանդիսին,
Զի ի վարկեան ժամանակին
Ի կոչմանէ հոգոյն հասին

Իսկ ուրբուհի Աստուածածին
Ի ծագ արևու առաւօտին,
Համբարձ զձեռս իւր հրաշալին
Առ տէր աստուած պաղատագին

Դարձեալ անտի ի յանկողին
Ի պատգարակս իւրոյ զպին,
Պետրոս նատէր ի սնարին
Եւ Յովհաննէս պատուանդին

Ամենեքին շուրջ պարառեալ
Զմահճօք կուսին դասակարգեալ,
Սիրով զոտիւք սրբոյն փարեալ
Զալևիւ երգով օրհնաբանեալ

Զի հարսնուհին կայր հրաւիրեալ
Առ բաղձալին իւր իւլձացեալ,
Ի յառագաստն աստուածարեալ,
Զոր խոստացեալ Էր ամա տալ

Էին անդ եպիսկոպոսք
Գերաստիճանք, տիրասնունդք,
Յակոբոս՝ եղբայր տեառն,
Գող խաչաբարձ կենսաստեղունք

Ի սուրբ խաչէ կենաց փայտէն
Առեալ ի ձեռն իւրոյ անդէն
Դիոնէսիոս յԱրիսպագէն,
Որ վարդապետն Էր յառաջմէն

Յոէթէոս գերհրաշալին
Որ աշակերտն էր Պօղոսին,
Որ ի գովեստ Աստուածածնին
Զարհուրեցոյց զհրեղէնս վերին

Յալնժամ սրբոյ Աստուածածնին
Կամէր վճարել զկեանս երկրային
Ի փոխադրիլ առ իւր որդին,
Որ հրաւիրեալն էր նա ամին

Իսկ Յոհաննու աւետարանչին
Յայտնի զփայլտ սուրբ պատկերին,
Որ էր մասն սրբոյ խաչին,
Զոր կենաստուին մեր կազմնցին

Յալնժամ ի միտս եկեալ նոցին
Վասն անջատման յինքեանց նորին,
Նկարակերտ նմոն ամին
Կազմեն զշերտն կիպարին

Եւ Յոհաննու կուսի որդին,
Որ Յիսուսէ փոխանորդի,
Ինք կոփեալ զձև պատկերին,
Զոր առ Պետրոս հանդերձ գնդիւն

Առաքելովք ամենայնին
Աւլաչեցին զՍ ստուածածին
«Ա՛ռ զտախտակս զայս և օրհնեա՛,
Որ քո փոխան երկրպագին

Զի յետ ելման յաստՀացս յերկին
Յուսով այնմիկ մխիթարին,
Այլև յաղագս բորոտ ախտին,
Որ յոյժ եռայր ի Պաղեստին

Իսկ ի բացման սուրբ խորհրդին
Մերկ առաջի մաքուր սրտին,
Թէ ընդ զրկիլս ի քոյդ կերպին
Զայս շնորհեացես ընդ քո կրկին

Զի որք յուսան կուսիդ յորդին
Մասամբս այսու քև յուսադրին,
Այլև վանիչ խստամարտին
Անկերպ ախտին և բորոտին

Նա զի և յոյժ է տրտմութիւն
Մեզ քո փոխումն ամենևին
Զի քև էաք յուրախութիւն,
Յետ համբարձման մերոյ փրկչին

Արդ տուր զսիրպ պատկերի քո
Մեզ մխիթար յետ փոխման քո,
Շնորհեա զսա բժիշկ գաւոյ
Լինել նշխար հօտիցս քո

Զի ոլ փափաքն է քեզ սիրով,
Զսա տեսանեն մեծաւ յուսով,
Լիցցի խնդիրք նոցա փութով
Հայցմամբդ լի հաւատով»

Իսկ որ զբժիշկն ադամային
Կրեալ պահէր սուրբ յարգանդին,
Անկար գոլով ասէր յանձին
Պարձուցանէր առ սուրբ գնդին

«Զիա րդ հարկի՞ք զտէրն աղախին,
Ով ժառանգորդք դատող գահին,
Դուք հրաւիրակք ի՞ք անմահին
Եւ հօտապետք սուրբ փարախին

Զեզ ետ բուժել զվէրս մոլարին
Եւ դիւրութիւն այսահարին,
Լսել խլին, հայել կուրին
Եւ թողութիւն պարտաւորին

Դուք աշակերտք գոլ արարչին
Եւ ձեզ շնորհեաց իշխանութիւն,
Զդևս հալածել յանուն նորին,
Բառնալ յերկրէ զկոտպաշտութիւն

Դուք հայցեցէք վասն այդմ իրին,
Չի զոր խնդրէք ձեզ լինիցին,
Չի թէ փակել ետ ձեզ զերկին,
Այլև բանալ զնա կրկին

Այլև իշխան արար յերկրի
Եւ բարեկամս իւր անուանի,
Փրկիչն Յիսուս տէրն ամենի
Զձեզ կոչեաց իւր սիրելի

Եւ զի նշանքն հրաշա ի
Ի ձեռս ձեր ասաց լինին,
Զի ոտք ձեր ուր հասանին
Ոչինչ անհնար ձեզ եղիցին

Այլ միաբան աղօթեցէք,
Անխռով սիրով յուղարկեցէք,
Խաղաղութեամբ զիս հասուցէք
Նաւահանգիստն զիս մուծէք»

Մատեաւ խօսել ընդ սուրբ կուսին
Պօղոս հնչող փողն Յիսուսին,
Եւ օրհորդ առագաստին
Կայթէր ընդ սէր մաքուր հարսին

«Ո՛վ տիրամայր, սուրբ միածնին,
Մեք անարժան ծառայք նմին,
Արարիչն ընդհանուր գոյին
Ի քէն հանեցաւ առնել մարմին

Արժանացեալքս այսմ մասին
Սուրբերոյ ընտրեալ շնորհին,
Որդւոյդ սիրով եկեալ ի սմին
Եւ մասնաւոր հոգոյն շնորհին

Իսկ դու ծնօղ հօր միածնին,
Մեք հրովարտակք զոլով նմին
Դու հարսն անբիծ Երրորդութեան,
Մեք փողք հնչողք զծնունդ քոյին

Որպէս տէրն ետ զմահուն իւր փայտ
Առ յինքեանէ աստէն պատանդ,
Յուսով ի նա յեռուլ անխախտ,
Որք ի մեղաց ընկղմեալ յաղտ

Տայցես և դու զփայտիս տախտակ
Ընդ ելս քո մահու կտակ,
Մեծ տրտմութեանս մեր ներհակ,
Եւ դու սովաւ ընդ մեզ անքակ»

Յայնժամ առեալ կուսին արբոյ
Զպնակիտ չնչին ևիւթոյ,
Ի հայրապանամ խնդրեաց գթոյ
Յառաքողէն յայնժամ որդոյ

«Որ առաքեցեր զքո միածին
Վասն աշխարհի առնուլ մարմին,
Յանարժանէս քո աղախին,
Որ կատարեաց զգրեալս օրինին

Է ւ համբարձաւ առ քեզ կրկին
Ի փառս անճառ սեփհականին,
Որ էր ընդ հօրդ և ընդ հոգին
ԵՒնքակ, անբաժ գոլ ի մարմին

Արդ աղաչեմ զհայրըդ վերին,
Բարձ գթութեամբ զախտ բորոտին,
Ի մարդկանէ, որ տագնապին
Ի ձեռն այսու ևկարեալ փայտին

Տուր զզօրութիւն Երրորդութիւնդ
Տպաւորելով ի տիպ [և]որիւն
Ի ձեռն իմոյ աղաչանացս
Ի կատարել զխնդրելիս

Որ բարձեր զյանցանս նախաստեղծին
Ի ձեռն որդոյ քո միածնին
Յիսուս Քրիստոս մարդկան փրկչին,
Որ կատարեաց զտնօրինութիւն կամաւ քոյին

Արդ կատարեա զխնդիր սոցին
Զրնտրեալ արանցս փոքու հօտին,
Որք բանիւ քո հրաման առին,
Ընդ ոտս երկրի քարոզեցին

Որք առ ի քէն առաքեցան,
Անչուր լերանց գետք ընթացան,
Տուր զայս ասցա որպէս ըղձան
Ընդ եւս իմում կալ մահարձան,

Զի քեզ լիցին յար պաշտպան
Փառաբանիչ Երրորդութեանդ,
Հօր և Որդոյ, Հոգոյդ բնական
Օրհներգութիւն միշտ յաւիտեան»

Յայնժամ կամար լուսոյ եկաց,
Զանձամբ կուսին պարափակեաց,
Եւ խաչաձև լոյս ծաւալեաց
Զսուրբ պատկերն անդ պսակեաց

Եւ ընդ լուսոյն ձայն երկնային
Հնչեաց առ կոյսըն տիրածին
Ասէ «Հաւցուածք քո եղիցին,
Ջոր և կամիս փոյթ կատարին»

Եւ նոյնժամայն որոտագին
Հոտ անուշից բուրեաց ուժգին
Եւ ի հոտոյն աստուածային
Թմբրեալ զմայլեաց զքիմս ամենին

Բայց առաքեալքն, որ նստէին
Ի շարժմանէն ոչ սոսկային,
Զի տեսութեամբ աստուածային
Վարժեալ և կիրթ գոլով Լին

Եւ յերրորդում ժամօրէին
Էջ տէրն յերկնից զօրօք վերին,
Եւ Գաբրիէլ և Միքայէլ
Զօրօք կային սպասու նորին

Եւ մինչ ուներ մայր կենսատուին
Զտիպ կիպարին յիւրում ձեռին,
Կալեալ հանդէպ աստուածորդոյն
Տէրն Յիսուսի իւր միածնին

Եւ տէրն մեր աջ հզօրին,
Իւրով ձեռօքն աստուածային,
Տեառնագրեաց զձև պատկերին,
Օրհնեաց բանիւ հոգոյ շնորհին

Տարեալ զպատկերըն ձկարած
Եդ ընդդիմին սուրբ երեսաց
Եւ արտասուօք յորդ համբուրեաց
Զբժիշկն ախտից վիրաւորեաց

Եւ մայր կենաց տէրն Յիսուսին
Ետ յառաքեալսն զտիպ պատկերին,
Զկենդանագիր իւրոյ ձևին,
Լցեալ շնորհիւ աստուածային

Մատեան Պետրոս երկրպագեաց,
Եւ Պօղոսի ընդ նոյն համբուրեաց,
Ընդ որս և այլ սուրբ ընկերաց
Երկրպագին հետ իրերաց

Եւ գոհացեալ զտեառնէ շնորհաց
Ի բաց առին ի սուրբ գրկաց
Եւ անդ տեսին ձկարագրած
Զաչքն և զբերանն զգոյն երեսաց,

Զարտևանունք սրբոյ կուսին,
Զքիմքն և զայլ գեղ պատկերին,
Ամենևին զամենեսին
Նկարագրեալ ի կենդանագրին

Յետ ալսորիկ սուրբն կանգնէր
Բանիւ առ տէրն անագանէր,
Ի տես Որդոյն մխիթարէր
Եւ գոհութեամբ փառաւորէր

Օրհներգութիւնս մատուցանէր,
Զի կատարեաց զխոստումն իւր տէր,
Վասն աշխարհի միշտ երկայնէր
Զբազուկն իւր սուրբ աղօթանէր

Ապա զհանդերձըն մերկանէր,
Հանեալ լանձնէէն ի բաց դնէր,
Զնորագոյնս ագանէր
Եւ յանգողինս տարածանէր

Իսկ առաքեալքն նստէին,
Ծուրջ զնովաւ պար առնէին,
Ներբողինիւ նուագէին,
Գերապատիւ մօրն երգէին

Իսկ տիրուհին պայծառ դիմով
Զշրթունս իւր սուրբ շարժէր մեղմով,
Տեառնէ հայցէր աղօթելով
Ընդ աշխարհի գոլ փրկելով

Իսկ որ կամէր զկեանս վճարել
Զհոգին յորդին իւր աւանդել,
Տէրն, որ եկեալ էր ի խնդրել
Յերկինս առ հայր դասակարգել

Յայնժամ սրբոցն սքանչացեալ
Եւ տրտմութեամբ եղեն լցեալ,
Ի յարտասուս եղեն փոխեալ
Եւ դողութեամբ յողջոյն մտեալ

Գունդն ամենայն ի միասին
Երկիր պագին Աստուածածնին,
ԶՅոթեթէոս յառաջ աձին
Զաշակերտ ճեմարանին

Եւ նա հոգովն աստուածային
Սկսաւ խօսել ի հանդիսին,
Զպատշաճաւուր պատիւ կուսին
Ի լոր րամիցն ամենին

Ի մէջ կացեալ աստուածազգեացն
Արտաքս ելեալ բնութեանն ազգաց,
Խօսեալ զպատճառ անճառելեաց
Զխորհրդոյն տեառն անանց

Բանին մարմին մեր եղելոյ
Ի սուրբ կուսէն մեզ յայտնելոյ,
Ընդ որ հիացեալ առաքելոցն,
Ետուն զփառս տեառն աստուծոյ

Զահս լուցեալ սուրբ կուսանացն
Եւ զբուրմունըս կնդրկաց,
Ի սպաս կուսին փոխան փառաց
Յեկեղեցիսն անդրանկաց

Ո՛վ սքանչելի մեծ հանդիսին
Աստուածազարդ պարուց խմբին,
Որ սխրալին է և պայծառ
Երկնաւմման սլարակցութիւն

Սփռեալ յերկրի տիեզերին
Բաժանք միմեանց եկեալ խառնին,
Այլև վերին պարք հրեղինին
Յերկիր հեղեալ ընդ մեզ խառնին

Ոմանց տուրք հարսն վեր ընդունել,
Ոմանց յուղի զնոյն առաքել,
Երկնային զօրք կաոս են ածել,
Զաստուածամայրն յերկինս տանել

Սոքա յղելըն տրումէին
Ի ի սուգ մտեալ թախանձէին,
Զնովաւ ակումբ առեալ լային,
Վասն անջատման սուրբ տիրածնին

Նոքա յընդունելն պատրաստին,
Զբազուկս իւրեանց տարածէին,
Խնճոյս առեալ և կայթէին,
Զի զտիրուհին ընդունիցին

Պետրոս երգէր յոյժ թախծագին
«Ելև ի մտի եդ սյբուհին,
Աստուածամայրս հովտէս ստորին
Տեղին ուստի ուխտեաց ճախկին

Եկայք հանցուք յելսն վերին,
Զսա ի հանգիստ յաւիտենին»
Եւ Գաբրիէլ հնչէր ուժգին
Ձնծալ եկեալ Լիբանանին,

Եկեսցես, անցցես ի վեր
Սկիզբն հաւատոյ ուրախաբեր,
Ի Սանիրայ գլխոյն վեհ էր
Եւ Հերմովնի տարափ ցօղեր

Ի մէջ մորեաց բոյն առիւծուց
Եւ ի լերանց դերբկաց ընձուց,
Ելցես յերկինս տեղիք սրբոց
ՅԵրուսաղէմ ջոկ արդարոց»

Յովհաննէս հեզ ձայն բարբառէր,
Արտասուագոչ ողբ յօրինէր
«Նուաղեաց սիրտ իմ ի քո սէր,
Որ բաժանիս ինէն»,— ասէր

Ով դու սուրբ կոյս Ահտուածածին,
Մայրդ կենաց ծնօղ բանին,
Ինձ մայր տուար ի ժամ խաչին,
Թէ յաւիտեան ընդ քեզ լինիմ

Այժմ գնաս դու վեր յերկին
Եւ գիս թողուս աստ ի ստորին,
Աւաղ է մեզ որդոցս քոյին
Ի տարագրիս վերստին»·

Եւ Միքայէլ ւպար յօրինի ր,
«Արտացուցեր զմեզ ի քո սէր,
Հարսն երկնաւոր, քոյր մեր,— ասէր,—
Քառամաճեայ զորդու ուներ

Զի գեղեցիկ են ստինք քո,
Հոտ հանդերձի քո ի խնկոյ,
Գինով արբեալ լի ի լիոյ
Յարկեալ ծածկոյթ ի խնձորոյ»

Պօղոս խօսէր առ սրբուհին
«Ո՞ւմ սպասատր,— ասէ,— լինիմ,
Զքերս ընծայից հեթանոսին
Ո՞յր նուիրիլ պատրաստ իցիմ

Զպաշտպան լինելս ի մէնջ բարձեր
Զտունն աստուծոյ ընտրել գնացէր,
Զհարկս նդոմայ լքեալ թողեր,
Բնակ յերկինս քեզ գտեր»

Իսկ պարք սրբոց քերովբէին
Եւ գունդ հրեղէն սերովբէին,
Տեսեալ զկոյսն օրհներգէին
Եւ զհամբառնալն երանին

«Ո՞վ է սա, որ ելեալ է
Իբրև զարև յառաւօտէ,
Որպէս լուսին, որ լրացեալ է,
Իբր զհիացումն կարգեալ է»

Յակոբ եղբայրն տեառն Յիսուսին,
Իբր նախընդել սպասլ նմին,
Շուրջ զնովաւ ի պաշտօնին
Մոնչելով հեծեծագին,

Ասէ «Գուժեաց ձայն ահագին
Միջի մերում ողբումն ուժգին
Ահշարհ և լաց ողորմագին
Եւ զորոշիլս անհնարին»

Իշխանութիւնք և պետութիւնք
Վերինք ահեղ հիւանային
«Ո՞վ է սա, որ ելանէ
Նպիտակացեալ յեցեալ յորդին»

ՅԻեթէոս մեծ իմաստին
Կրկին կացեալ մէջ հանդիսին,
Խօսէր հրաշիւք զտնտեսութիւն
Աստուծոյ ի կոյսն խորհրդին

Ստուածաբան եղեալ ամին
Ներբողինիւ հիւանային,
Սքանչացեալ ի յորհրդին
Պատմաբանէր ի հանդիսին

Տարածէր նա զխորս իմաստին
Մինչև երկրորդ միտս ճոցին,
Եղև խորհուրդ փոխման կուսին
Տեառն աստուծոյ ևիրելին

Առ տնտեսութեան հիացմանին,
Ջոր և մատոյց մեծ սրբուհին,
Աստուածութեան տնօրէնութիւն
Յիւրմէ տևեալ տեառն զմարմին

Քանզի պատմեաց ենցա կարգաւ,
Որպէս աստուած այսր ճանգեաւ,
Տաճար բանին ճոր կոչեցաւ,
Հուրն աստուծոյ ընդ ճողն խառնեաւ·

Որպէս անեղ եկպարագրին
Աստուծոյ ճոր ծնցոյ որդին,
Աս ի սմանէ զհուրն մարմին
Եւ ձևացոյց զաստուած ի ճմին·

Զհարդ փառաց լոյսն անեղին՝
Մարդ ի սմանէ յայտնեալ ծնանի,
Որպէս ջամբողն տիեզերին
Ի ստեանց սորա ճաշակ լինին

Զհարդ կրողն արարածին
Խնամող տածօղ եղականին,
Բազկաւ բարձեալ լինի սորին
Գգուիլ ճանի զերդ երկրածին

Որպէս տիրօղն հրաբուն սեռին,
Այլև ստորնոց բանականին,
Հնազանդ որդեակ լինր սմին,
Որ յամենայն ազգ ծանիցին

Եւ թէ զհարդ ճոր իմաստին
Առնու ճրամնան բանիւ սորին,
Համարձակիլ ի գործ հրաշին
Աս ի փոխել զջուրն ի գինին

Ապա կարող խնամող էին
Ի չարչարանս մօր վշտակցի,
Յանդ տեալ աշակերտին,
Մինչև ի մահ սպասել սմին

Ոյր աղագաւ բանն անեղին
Հրաւէր այսօր ի կոչ ճնօղին,
Դասուք վերնոց հրեղէն սեռին
Վեր համբառնալ զկոյս տիրածին:

Զայսքան հրաշից սքանչելին
Յայտնաբանեալ զխորհուրդ իրին,
Ի փառս անճառ արբոյ կուսին
ՅՈեթէոս արբոյ գնդին

Մինչդեռ խմբեալ արբազանին
Առաքելոց դաս երամին,
Քահանայապետքըն առաջին
Շուրջ զմարմնով աստուածակրին

Քանզի համայն անդ ժողովին
Միահամուռ հոյլք երջանկին,
Որպէս ասաք նախ և կրկին
Զհաւաքումն ընտրեալ հօտին

Անդ էր եղբայր տեառն բանին
Յակոբ արդարն և հրաշալին,
Պետրոս յաղթող վէմ հաւատին
'Ի աստուածաբան Յովհաննիսին

Եւ ետ խօսից իւրաքանչիւն
Վայելչական հզօր բանին,
Փիլիսոփայից, ճարտասանին,
Ներգործութեամբ հոգոյն շնորհին

Իմաստութեամբ տեառն Յիսուսին
Եւ գիտութեամբ հօր հզօրին,
Որք և զծորանս հոգոյն արբին
Յաւուր մեծի Պենդակոստին

Աստուածաբան յՈւթիւն
Կացեալ ի մէջ սուրբ հանդիսին,
Զխորհուրդս յայտնեալ զսքանչելին
Ի լուր բամից համայն խմբին

Որք և լուանն սքանչանային,
Աստուածընկալ զնա անուանին,
Օրհնաբանող աստուածային
Յայնմ ժամու զնա կոչէին

Որք և ապա հաստատէին
Ի պատիւ մօրն տեառն Յիսուսին
Յաստուած բանող գերիմաստին,
Որ ներբողեաց զՍտուածածինն

Մտեալ առաջի սրբոյ կուսին
Առհաւատչեա թողուլ մաղթին,
Զկենդանագիր սուրբ պատկերին,
Սուրբ և մաքուր իւրոյ տպին

Որ և ընկալեալ զմաղթանս նոցիս
Առաքելոց ընտրեալ գնդին,
Ետ ի նոսա փոխան իւրին
Սուրբ պատկերան մխիթարին

Եւ յոյժ եղև նոցա խնդութիւն
Առաքելոցն ամենեսին,
Վասն սրբոյ կենդանագրին
Եւ պատկերի Աստուածածնին

Իսկ ընդ կատար տուր և առին
Ծնորհաց վերին և ներքնային,
Պատմաբանից ներբողինին,
Զոր ընծայեաց աստուած հոգին

Եւ ընդ տալոյ երկրիս երկնին
Զերախայրիս զծնող բանին,
Սունոյ անստուստ փոխան նորին
Զնկարակերտ ձև նիպարին

Ընդ այս և ձիրս անքննելին,
Զոր ի տեառնն մեզ ընծային,
Այլ թէ չէաք արժան ամին,
Բայց ի տեառնէ պարգև լինին

Որ ի վաղուց դարուց նախնին
Պանծր մարդկան յուսով ի կին,
Զտնօրէնութիւն ծննդեան փրկչին
Առիթ պատճառ Աստուածածինն

Եւ ընդ յանկել այնմ շնորհին
Սուրբն աւանդեաց զմաքուր հոգին,
Անտարակոյս յորդոյ ձեռին
Քրիստոս աստուած Յիսուս փրկչին։

Ոչ ըստ բնութեան մեր ցաւագին,
Զի մասն չէր ինչ ախտային,
Այլ գերագոյն մեր մարդկային
Շնորհս պարգևեալ աստուած նմին

Որպէս ծննդեանն անդրանկին
Ցաւք և երկունք ոչ տիրեցին
Նոյն և ի ժամ հոգէվարին
Կիրք բնութեանս ոչ տանջեցին

Ետ զհոգին յորդոյ ձեռին,
Միայն մնաց տուփըն խնգին,
Եկեալ մաքուր դասք կուսանին
Բարձեալ նին դստիկոնին

Ապա դասուց սրբոց կուսին
Յաշակերտաց դասն խառնին,
Զաստուածաբարձ տաճարն քարձին
Օրհներգութեամբ սաղմոսէին

ՅՈՒթէոս մեծաւ ձայնին
Ընկերացաւ սրբազանին,
Եղանակաւ երգաբանեն՝
Ներքողենիւ և նուագին

Եւ ձայնակցեալ դասք երկնային
Ընդ երջանիկ սուրբ գումարին,
Սիրահամբաւ պարք անմարմին
Եղանակեն զերգս կուսին

Յորմէ քաղաքն դղրդին,
Հրէականացն սրտմտին,
Յանդգնութեամբ անդ գումարին
Ընդ աչուքեամբ անդրէն հարին

Եւ մերձեցեալ մաքուր կուսին
Կոչան Յովհաննէս մօր աներին,
Պատեաց մաքուր կտաւօք ինքնին
Զաստուածաբնակ մարմին կուսին

Այլև եղեալ ի դագաղին
Զպաւակն ոստոց բրաբիոնին,
Զգեալ ծածկոց Յովհաննիսին
Զպատանս տեառն կենսարարին

Իբր պատիւ այն Յովհաննին
Ընդ առաքելոցն այլ աւելին,
Քանզի կոչեալ էր նա որդի
Աստուածամօր Մարիամին

Պետրոս ունէր յիւրում ձեռին
Զպտուկեր սրբոյ Աստուածածնին,
Եւ Յակոբոս եղբայր փրկչին
Ըզտէրունեան ընդ խաչին

Թովմաս ունէր զբուրվառ խնկին
Ի այլ առաքեալքն երգս երգէին
Բարձին ի լուս ամենեքին
Սուրբ առաքեալքն զկուսին մարմին

Սռեալ տանին զմայր միածնին
Ի հանգստեան դիր տապանին
Եւ չսէին զձայն հրեշտակաց,
Որք պար առեալ օրհներգէին

Պետրոս զելիցըն սաղմոսին
Սկսաւ ասել ըստ խորհրդին,
Յելանելն Իսրայելի յԵգիպտոսին
Եղանակէ զալէլուին

Միաձայնեալ սրբոյ գնդին
Առաքելոց դասք երամին
Եւ կուսանաց մաքրագունին
Ընդ երկնայնոց խըմբից վերին

Լսել ողբով զերգս սաղմոսին,
Քաղցր և անուշ եղանակին,
Յորմէ քաղաքն դըղրդին,
Հրէականքն սրտմտին

Յանդգնութեամբ անդ գումարին,
Ծլաչութեամբ հարեալ լինին,
Զի գիշահանձք էին բնաւին
Եւ տիրասպանք ամենին

Մինն, որ անունն Սովոնիայ
Մինչ ի դագաղն լրբենայ,
Նուր հրեշտակին անդ մերկնանայ,
Ձեռքն յարմրկացն մնայ

Ձայնէր Պետրոս «Ո՛վ չար ոգիք,
Ազգ անհաւատք և խստասիրտք,
Ժանդախորհուրդք և թերամիտք,
Մինչև ցո՞ր վայր յայտ յամառիք

Զիա րդ ոչ բոլորովին
Ձղջայք յանզեղջ ձերոց սրտին,
Այլ կայք հեատեալք հետ սատանին,
Որ հայր է ձեզ գործովք չարին»

Ասէ Պետրոս հրէից ազգին
«Դարձիք առ ուէր սրտիւ ի լին,
Խոստովանել զմեղս ձեր անձին,
Հաւս տացի ք յԱստուածածին

Սուրբ կոյս քաղցր է ի բարին,
Գթայ ի ձեզ սիրով սրտին,
Չի բարեխօս է մարդկային
Առ միածին խաչեալ որդին»

Յայնժամ գոչեն մեծաւ ձայնին
Չխաչեալն աստուած խոստովանին,
ԵՒս տիրամայրըն հառաչեն,
Ի յօգնութիւն ինքեանց կոչեն

Պետրոս բանիւ սաստէ ցաւին,
Փոյթ ի յաչացըն փարատին,
Զհատեալ կախեալ ձեռ դագաղին՝
Յարէ դարձեալ ի նոյն մարմին

Աստ սքանչելիք բազում լինին,
Զի որք խրոխտ փքով եկին,
Յափշտակել զկուսին մարմին,
Զի մի փառօք մեծարիցին

Նոյն և ինքեանք զոր խորհէին,
Առին պատիժ կրկին-կրկին,
Որպէս յառաջ քան զմահ կուսին՝
Ի սուրբ կուսէն պատուհասին

Զոր և ցուցից զփոքրն ի բազմին
Եւ զսակաւ ի յոլովին,
Զի չարչարանս բազումս ցուցին
Ծնօղ ի սրբոյ տեառն Յիսուսին

Կալիափայ ւ ազգն հրէին
Վիշտս և վտանգս նմա տային,
Զի ոչ թողուլ յոյժ ջանային
Գնալ ի սուրբ գերեզմանին

Եւ այլ տեղիս տնօրինին
Տեառն Յիսուսի մերոյ փրկչին,
Զի միշտ կանխէր բաղձմամբ սրտին,
Աղօթս առնել ի սուրբ տեղին

Զի ի սպանանելն Յակոբոսին՝
Եղբօր տեառն Յիսուս փրկչին,
Երթեալք ի տունն հուր հարին,
Յորում բնակէր մայր կենսատուին

Շրջապատեալ հուրն զհրէին
Կիզեաց եօթն այր ի նոսին
Եւ զՍննայ, զԿայիաւիայ,
Զքահանայապետ անուն Ղևին

Եւ տան սրբոյ Մարիամին
Վնաս չեղև ամենևին,
Որք երկուցեալք ոչ իշխէին
Համարձակել յանձն կուսին

Եւ ի յաւուր մկրտութեան
Խուժադուժաց ազգ հրէին
Գնացեալ հրոսակք Յորդանանին՝
Ըմբռնել զկոյսն ընդ Յոհանին

Իսկ հրեշտակին, առեալ զնոսին,
Եդ ի յայնկոյս Յորդանանին,
Եւ հրէիցն անցել կամին
Այրս քսան կորեալ բնաւին

Եւ ի յաւուրս համբարձման
Տեառն ի լերինն Ձիթենին,
Յախտան քարամբք յարձակէին
Հրէից հասեալ առ սրբուհին

Որք և զմիմեանս հարեալ քարամբք,
Արս հիսուն անդ սատակին
Այսքան հրաշից ւ այլ աւելին
Յառաջ եղեալ ննջման կուսին

Եւ զի չէր յանկ ի սոյն կարգին
Պատմաբանեալ վասն այս աքանչելին,
Այլ զի դէպ չեղև նախկին
Կամս ակամայ աստ պատահին:

Դարձեալ սկսայց ի նոյն հրաշին
Զոր ի ննջմանըն կատարին,
Յետ կուրութեան հրէից ազգին
Եւ հատման ձեռին Սոփոնիային.

Բազումք անդէն հաւատային
Քարոզութեամբ Պետրոս վիմին,
Զհրիստոս աստուած խոստովանին,
Մկրտութեամբ լուսաւորին

Ազգ հեթանոսք և հրէին
Զկոյսն սուրբ դաւանէին,
Այլ և բորոտք և ախտաժետք
Սուրբ պատկերաւն տեառնագրէին.

Այլև ի իւղով օծանէին
Մաքուր ձեռօք առաքելին,
Որք առժամայն բժշկէին
Յախտից բազմաց ազատէին

Մինչև համբաւ մեծի հրաշին
Ծագմամբ լուսոյն ընթանային
Ի յամենայն Հրէաստանին,
Նշանքն եղեալ ձեռօք կուսին·

Իսկ զմեռեալդ ի կենդանին
Տարեալ ի կէտըն պալմանին,
Զոր վաղագոյն տեառնէ յայտնին՝
Զորն անուանեալ Գեթսամանին

Ընդ համբառնալ զօրոց վերին
Ի Խորափիտն ամփոփէին,
Ըստ տիրական պատուիրանին՝
Ըզգուշացեալ սինդ պահէին

Յաւուրս երիս անդրէն գալով
Ուստի երգոց ձայն լսելով,
Ապա լռեալ զտեղի կալով
Հնչիւնքն ձայնին դադարելով

Այն ինչ հոգւոյն տնօրինեալ
Բարդուղիմեոս յետոյ հասեալ՝
Այն որ ի Հայս շրջագայեալ
Եւ ընդ Թովմայի Հնդիկն գնացեալ

Առեալ ի սուք մեծի ննտէր
Եւ եղկելով զանձն կոծէր,
Յողջոյն սուրբ մօրըն փափաքէր,
Ընդ օրհնութիւնս տոչորէր

Եւ զառաքեալսն բռնազբօսէր,
Զաստուածային գաւնձն հայցէր,
Զմարմինն օրհնեալ կուսին ժտէր,
Զի յոյժ փափաք առ նա ունէր

Ընդ որ առաքեալքն տրտմէին
Խորհեալ գնդից մետասանին
«Բացցուք զգաւնձն աստուածային,
Առ ի լնուլ զիղձս սրտին»

Փոքու հօտին համալգումար
Սուրբ կուսանօքն խումբ առեալ,
Բացին զտապանն ամ նօրհնեալ
Եւ զկտաւիսն անդր գտեալ

Ո՛վ հրաշալին ելանելոյն
Յառագաստէ ատեղն ծխոյն,
Զմուռ, կնդրուկ, փոշեաց յիւղոյն
Յիւղեփեցեալ մաքուր խնկոյն

Վաթսուն գոլով վահանաւորք
Ընդ արքային մեծի գահոյք,
Հմուտ մարտի պատերազմողք
Օդակաւացն արհաւրաւորք

Ել ի սեղեակ մօրն վերին՝
Գեր ի վերոյ վեհ եթերին,
Ի պատրաստեալն հայրենին
Յանմահս յաճլուր յանբերելին

Կրկին ի սուք նա մտաւէր,
Որ և մարմնոյն ոչ ժամաւէր,
Խղճիւ մտացն աւաղէր
Եւ անձամբ զանձն ըստգտաւէր

Վասն այս է ր սուք Բարդուղիմին,
Զի լուաւ զօրհներգութիւն,
Զոր ինչէին դասք սրովբէին
Եւ ոչ զդին ի տապանին·

Մինչ ի հոգոյն բան ազդեցաւ
Գնդին սրբոյ յայնժամ ցուցաւ,
Նշխար փայտին, որ շնորհեցաւ՝
Բարդուղիմայ վիճակեցաւ

Ետուն նմա մխիթարիչ,
Առ բնկալաւ իբր սփոփիչ
Ի բկրպագնաց սուրբ համբուրիւ
Զտրտմութեանցն ապաքինիչ

Անդրէն յոքունց ախտաժետաց
Հրէաստանէն և որք յեկաց,
Անդորրութիւն գտան վշտաց
Սուրբ պատկերէն և յօծանաց

Նպա գէղբարսըն ողջունեալ,
Ընդ արնելս կրկին դիմեալ,
Ի վիճակն պարտ էր գնալ,
Յոր Սանատրուկ զԹադէ սպանեալ

Զանդրժելի գանձն բարձեալ
Ընդ միջերկրայս տարակացեալ,
Զվիճական այնու զանցեալ
Ընդ մոգաստանս գնայր դարձեալ

Մինչ ի քաղաքըն Խորասան
Աթոռ նոցա արքայութեան,
Ուր և շիջոյց զկրակարանն
Եւ լոյս կանգնեաց հրոյն փոխան

Եւ զլուսատուն մարդկան հոգւոց
Արեգականն ընդդէմ կացոյց
Զակն լուսոյ այս փորուածոյս
Երեք ժամաւ խաւարեցոյց

Բայց ապառաժն անպտղական
Ոչ աճեցոյց ըստ սուրբ սերման,
Միայն յոտից որք ընտրեցան
Եւ ի նմանէ մկրտեցան

Նոքօք դառնալ ի նոցանէ,
Կրկին ի Հայս դարձեալ դիմէ,
Ի Գողթ գաւառն մտանէ,
Զբազումս ի տէր դարձուցանէ

Զանբիծ հաւատն անդ հաստատեաց,
Զարսն նոցա գլուխ կարգեաց,
Առեալ զոմանս, որք ի կանանց,
Եկեալ յերկիրն Սձնւացեաց

Ահ ի համբաւ քարի միջ,
Յոր էր աղուեւն ամրացեալ յորջ,
Ընդ Անահտայ բնակէր տիկնոջ՝
Մարդախոշոշ կռանագոչ

Քանզի փայլակն ի վայր անկեալ,
Ի Դարբնաց քրայս արկեալ,
Զդեղն, որ կազմէր ախտիւ խառնեալ
Յուռութ ուլունս մակարդացեալ

Որպէս և ճառն պատմական
Ուսուցանէ մեզ միաբան
Եւ զվիշապին հին մեքենայն
Կիպրիանոս այր սրբազան

Զի հին վիշապն անդ բուներ
Եւ կռանին համաձայներ
Բախմամբ թնդմանն ահ արկանէր,
Զնոսա յուշոյ միշտ խափանէր

Իսկ արք տեղւոյն զերդ խելագար
Անդ խռնէին դեգերաբար,
Թարախածոր առեալ ծրար
Եւ կոչէին Դարբնաքար

Յայս վայր հասեալ առաքելոյն
Փութով խափան առնէր գործոյն,
Դարբնական բախման թընդոյն,
Որ գործօնեայք էին նիւթոյն

Եւ զդիցամայրն խորտակեաց,
Զբռնութիւն քակեալ դիւաց,
Քարանձաւէն յայն հալածեաց
Եւ սրբութեան տեղիք գործեաց

Իսկ չար զինուորքն գունդ առնէին
Ընդ հիւսիսի բարձրու լերինն,
Վիրգս ի վիմացն յայն հոսէին,
Ընդ այն և ճիչս արձակէին

Բարդուղիմեայ զայն տեսանէ,
Բարձրաւանդակ լեառն ելանէ
Խաչ փոքրիկ անդ օծանէ,
Քարիւ մի զքաջքն արտահանէ

Զոր և յետոյ սուրբն Գրիգոր
Զարձանն առեալ պահէր ընդ իւր,
Մինչ Տրդատայ մահուանն յաւուր
Երեսին եդ պսակաւոր

Կանգնէ և անդ կրկին նշան
Յատորոտով լերինն յայն,
Կարկառակոյտ մի սուզական
Ջեռնադրեալ ի մեծ արձան

Եւ է տեղին յոյժ լեռնափակ,
Պատեալ վիմօք երկնադիտակ,
Իսկ մէջ ծոցոյն հարթայատակ,
Հոսանահերձ վիհաքատակ

Զի Տիգրիսին մեծի կալլակ,
Որ յԱդեաձայ քառորդ վտակ,
Ցասմամբ խաղալ միշտ համարձակ
Ընդ գոգ հովտին արագ արագ·

Մերձ Կաճգուար մեծ ամրոցին,
Որ Ագռաւուց քար կոչէին,
Ուստի լերանցն ջուրք հոսին
Եւ գետանան ընդ գարնան մասին

Գալ զառիվայր առապարին,
Անցեալ ընդ հիմն տաճարին,
Ընդ արքային շիրմով պարին,
Ապա ի մի խառնեալ յարին

Հիմն արկանէ անդ հաւատոյ
Ընդ խորանին կառուցելոյ,
Շինեալ յանուն կուսին հոգւոյ
Եւ պատկերին, որ անդ սրբոյ

Արդ առաքեալ Բարդուղիմին
Կառուցանէ իւրով ձեռին,
Փոքր ձևով զեկեղեցին
Եւ անուանէ Աստուածածին

Ջտեղին Հոգւոց վանք անուանէ
Եւ ի քըւերս կանգնոյս յանձնէ,
Խրճիթ փոքրիկ նոցա շինէ
Եւ ի դերբուկս բաժանե

Կացուցանէ զքոյրն Յուսհատայ՝
Մայրապետ կրօնից գլուխ նոցա,
Զքոյրն Օրմզդայ և Մաքովտրայ
Եւ զայլ կանայսն յետ նոցա

Եւ ինքն ի Հայս դարձեալ երթայ
Ի յՌհրբանիս քաղաք Բարմայ,
Որ այժմ Աղբակ կոչի նորա
Յովբիանոս անուանի նա

Վասն սրբոյ առաքելոյն,
Որ չարչարեալ եղև ի նոյն,
Քքով հարեալ յերկարագոյն,
Ըստ այսմ կոչի անուն տեղւոյն

Զի զկսկիծըս դառնագոյն,
Զոր ոչ կրեաց մարդ ոք զնոյն,
Զի անդ հանաւ մորթ ի մարմնոյն
Ի ինքն շրջէր կենդանագոյն

Նւ անդ հալատս ընձայեցաւ
Եւ նորահրաշ ինչ յայտնեցաւ,
Զի ապամորթ մարդն կեցաւ,
Ապա սրրով կատարեցաւ

Իսկ Մարիամ առանձնացեալ
Քոյր Յուսհատա՝ Յուսկանն կոչեցեալ,
Յայն կոյս գետինն մեծի անցեալ,
Առ ոտս փոքու վիմի կացեալ

Որ և անդէն յուսով մեծաւ
Անմարմնաբար ճգանց տարաւ
Եւ ինքն ի նոյն մարմնով մեռաւ
Եւ անտանօր իսկ թաղեցաւ

Եւ նա զԱննա քոյրն իր կացոյց
Յետ իր տեղոյն խրատող նոցունց,
Որ և նորին զվարս անմարմնոց
Տըւեալ յետնոցըն ապացոյց

Ինքն հետևեալ սրբոց հետոց,
Ծինեալ խրճիթ աղօթանոց,
Գագաթ վիմին ամրականոց,
Որ և կոչի քար Դարբնոց

Եւ է հանդէպ մենաստանին,
Դիմաց գոլով արևելին,
Անդ աղօթէր թիկանց վիմին
Բաղձմամբ սիրոյ տեառն արարչին

Փորու ասուրբք անդ ճգնեցաւ
Եւ ի նոյնում կատարեցաւ,
Օրմզդադա քոյր Մարթայ,
Փոխան նորա գլուխ կացաւ

Նոյնպէս միմեանց յաջորդ գոլով
Հարստակրօն յաւուրս յոլով,
Մինչ ի վերուստ երևելով
Այցելութիւն տեառն հոգոյ

Զբազումս ի տէր մկրտէին,
Զախտս ի մարմնոց փարատէին
Եւ երթալով տեառն երթային,
Օրըստօրէ յաւելուին

Միանչ ի յաւուրըս Գրիգորի,
Նրբոյն մերոյ Լուսաւորչի,
Վանք մեծափառ ըստ արժանոյն
Ի արհիական աթոռ կարգի

Շինէ զտաճարն սուրբ Սիոն
Զեղբայրանոցս ի բնակութիւն,
Բայց զհաստեալն յառաքելոյն
Ոչ նոր փոխևաց, այլ կայ ի նոյն

Այլև զդասս պաշտօնէիցն
Կարգեաց ի փառս աստուածային,
Օրհնել զՀայր և զՈրդին
Զամենասուրբ աստուած զՀոգին

Քահանայից սարկաւագին,
Դպրաց ընդ նոյն գլերիկոսին,
Զանլռելի փառս ննչէին
Երրորդութեան ի միասին

Սո ի գտանել զողորմութիւն,
Ոչք ըղձային բաղձմամբ սրտին,
Ի ձեռն սուրբ Աստուածածնին,
Յորոյն անուն ոխտս կանգնին

Որ բարեխօս Լ բոլորին
Ազգի համայն քրիստոնէին,
Սա միածին Յիսուս որդին՝
Փրկել զծնունդ ապազային

Ընդ նմին և սուրբ Բարդուղիմին
Տեառն Յիսուսի առաքելին
Եւ սուրբ Գրիգոր Լուսաւորչին
Զմեզ խառնէ առ Քրիստոսին

Նոցին կցորդ Թադէոսին,
Նոյն առաքեալն Լ Հայկազնին,
Որով առաք զհատ մարգարտին
Զհաւատն ուղիղ շնորհիւ սորին

Այս չորեքումբք վիմօք հաստին
Շինուածք մերոյ սուրբ հաւատին,
Ննջմամբ սրբոյ Աստուածածնին,
Որ է միջնորդ մեզ առ Որդին

Այն արբմամբ հոգոյ շնորհին
Քարոզութեամբ Թադէոսին,
Զոր վիճակեալ առաքելոց
Հայք մասն եղեալ Թադէոսին

Այլև երկունք մեր լուսատուին
Չարչարանօք մասն երկոքին,
Երիք հնգօք ամօք եղին
Կրեաց ընդ տեառն զպակաս նորին

Որով վշտօք իւրոյ աձին
Զմեզ ի խորոց եհան ձերքին,
Ընդ տեառն լծեաց պատուիրանին,
Արար հաղորդ անմահ բանին

Նոյն և սրբոյ Բարդուղիմին,
Որոյ պատճառ եղեալ սորին
Կենդանագիր սուրբ պատկերին
Եւ շինութեան սուրբ տաճարին

Այլև Ներսէս, որ վիճակեաց
Ըզսուրբ աթոռն իւր հայրենեաց,
Եղեալ տեղիք հոգոյն շնորհաց,
Սիւն և կանգնիչ Հայաստանեաց·

Զի զաւանդեալ հարցն առաջին
Զուիստ կտակի պատուիրանին,
Սա ձորոգէ դարձեալ կրկին
Կարգ և կանոնս մեզ՝ հոգով լին

Շինեալ տաճար անթուելին
Ընծայարան զենմսան գառին,
Փուտկաչս, պանդոկս և հիւրանոց
Լինել հանգիստ վտանգաւորին

Սրդ ընդ սոցա թըւոց բազմաց,
Որ և առվաւ եղեն շինած,
Միոն ի բազմանց ւսս է կազմած,
Որ Հոգեաց վանս Ի նախձայնած

Սա զախտակրեալսն աՀդ ժողովեաց
Եւ ախտաբակս հաստատեաց,
Որք աՀդ կացցեն սիրով կամաց,
Առցեն շնորհս զանանց

Որք առնուին ըստ հաւատոյ
Զառողջութիւն ախտից մարմնոյ,
Մինչև ցայսօր տայ ըստ յուսոյ
Զնիւթական ըստ անհիւթոյ

Եւ կայ, մնայ յամեալ ի նմին
Հրաշագործ նոյն զօրութիւն,
Որով բազում բժշկութիւն
Լինի ախտից ւ ուրախութիւն

Անուամբ սրբոյ Աստուածածնին
Կենդանագիր իւր պատկերին,
Ոչ սակաւուք մարմնով քուժին,
Այլև հոգով լուսաւորին

Որք գան յուսով հաւատալին
Ունել միջնորդ զԱստուածածնին,
Զամէնօրհնեալ ծնօղ բանին,
Զմայրն աստուծոյ զկոյս տիրուհին.

Եւ որք խնդրեն սիրով ի լին,
Առնուն ըստ խոստմանն Քրիստոսին,
Եւ պարգևեալ տացի բարիս
Ողորմութեամբն աստուածային

Փառաւորել զՀայր և զՈրդին
Զանզեկնելի աստուած Հոգին,
Այժմ և յանկէտ յաւիտեանին,
Որ միշտ օրհնի յԵկաւանին

Եւ զի գիտել մեր զայս պարտին
Յետ սուրբ ծննդեանն Աստուածածնին,
Ի ծնօղաց իւր պանձալի
Երեք ամաց եղև բերին

Ընծայիւք պատարագին
Եւ մատաղօք ի տաճարին,
Անդէն դարձեալ ի տուն տանին
Ի յամէն տարի տաճարն բերին

Մինչ ի լնուլ եօթեանց ամին,
Այլ ոչ տարան ւիւրեանց տնին,
Այլ սնանին ի տաճարին
Սուրբ և մաքուր առաքինին

Սպասաւորեալ հրեշտակք նմին,
Իջեալ երկնից հոյլք անմարմին,
Մանաւանայիւ կերակրէին,
Որ բերէին զայն իսկ նոքին

Եօթն ամաւ ի տաճարին
Բնակեցաւ սուրբ աղաւնին,
Եւ ի լնուլ եօթնից կրկին
Չորեքտասան ամաց նմին

Եւտուն Յովսէփ պահապանութիւն
Ըստ օրինաց Իսրայէլին,
Սմիսս երիս աւ նա լինի
Կնքեալ ամբողջ սուրբ տօմարին

Ապա հրեշտակ Գաբրիէլին
Հրաման առնու աստուածային
Եւ աւետիս տայ սուրբ կուսին՝
Ծնանի ի քէն աստուածորդին

Եւ ի լսել զձայն աւետին
Իջեալ աւ նա աստուած հոգին
Կազմեաց գահոյս թագաւորին
Հօր աներեի որդոյն մեծին

Եւ յինն ամսեա լրման հորին,
Հնգից աւուրքք յաւել որդին,
Ինակի յարգանդ սրբոյ կուսին,
Հնգի տասան ծնանի յամին

Եւ հաւքարձման տևառն ի յերկին
Քառիւք տասամբք ութ աւելին,
Ամօք լցեալ այսքան էին
ԾՐօղի բանին կենսարարին

Եւ ի ննջման մօր աներին
Վաթսուն ամօք բովանդակին,
Յորում աւուր ծնեալ նմին
Քսանևհինգ աւի ամսին

Ի նոյն աւուրն վախճանի
Գերապայծառ մայր միածինն
Եւ Էր հասակ սրբոյ կուսին
Երկայն, սպիտակ, շնորհիւ ի լին

Աստուածային օթարանին
Երկայն մատունք գոլ հրաշալին,
Այսպէս զարման գեղ գովելին,
Որ չէ եղեալ ազգ մարդկային

Ո՞վ անբաղդատ հրափայլ դիմին
Գերամաքուր տիպ պատկերին,
Զկրօղ Էիցս ամէնայնին,
Տարեալ սրահէր յիւր սենեկին

Որք ընդ աղօտ ակնարկէին
Հոյլք սրովբէից գունէայ մասին,
Նկատել ի լոյս աստուածային,
Զոր կոյսն սուրբ կրեաց յանձին

Սա զբովանդակ լուսոյն արփին
Տարեալ եղև յիւր յարգանդին
Նւ զփրկութիւն մեզ շնորհողին
Ծնաւ որդի զբանն անմարմին

Որով մեզ յոյս տըւաւ կրկին
Դառնալ անդրէն առ հայրենին
Եւ ժառանգել զանճառ բարին
Ի հանդերձեալ դատաստանին

Արդ ամենայն եղեալ բարիւ
Որով տուաւ մարդկան ազիւ,
Գոլով պատճառ կոյսն հրաշալի
Սուիթ կենաց մեր ամենիւ

Որպէս ծնունդ հրաշիւք կուսին
Նոյնպէս սնունդն քարեօք ի լին,
Այսպէս փոխումն յերկրէս յերկին
Դասիւք զուարթնոցն վեր ամփոփիլ

Այսու պարծիմ ևս նշանաւ,
Որ ի կայիս մեր հանգուցաւ
Եւ արքային գերեզմանաւ
Որ հանգուցեալ ընդ հովանեաւ

Եւ կայ առյլ քանն աստանօր
Որ ի պատիւ աստուածոյն մօր
Ի փառս Հոգւոյն Որդւոյ և Հօր,
Երրորդութեանն համազօր

Ով արբունի կոյս Մարիամ,
Վիմածին լեառն և սուրբ խորան,
Ի գալստեան կրկին անգամ
Քոյոյ որդւոյդ ի դատաստան,

Հանդիսանալ ընդ քոյ յայնժամ
Ըարեխօսել վասն մարդկան,
Կրկնեա՛ և ծունր մի անգամ
Վասըն հիքոյս մեծ կործանմանն

Մի ընդ անյուսից խարխափման
Խաւար մտօք մոլորական,
Դարձայց դիմօք պատկառական,
Զի հաւատով ի քեզ յուկամ

Այլ ընդ ճոսա, որք գոչգացան
Եւ գթութիւն դարձեալ գտան,
Գիտ զիոգիս վըտարական
Եւ միաճնիդ կալ ւանդիման

Բախմամբս զդուռն արքայական
Հայցեա բանալ զողորմութիւն,
Եւ քարձրասցի փառք տէ րութեան
Ընդ փոքրոգոյս մեծ փրկութեան

Ան որ գոչեմ հաւաչական
Ի խոր սրտէ աւաղական,
Զխոցեալ հոգիս քիւր ցանկուրեամբ
Ննողջացո անճապական

Զանկեալ գերիս հոգով յանցման
Կանգնեա , սուրբ կոյս, քոյին անուամբ,
Լեր և միջնորդ ինձ գթական
Առ միաճինդ անմահ արքայն

Զի զիոգիս թշուառական
Ազատեսցէ իւրով արեամբ
Եւ զկործանեալս չարեօք յանցման
Կանգնէ յուսով ողորմութեան

Սաստիկ կեղով բորոտութեան
Սպառեաց զմարմինս անեզրական.
Զար թշնամին կորընտական,
Որ ի յանդուգն ունի դարան

Տպաւորեաց հոգիս զբնականն
Գէջ ախտութեամբ անյագական,
Այլ աղաչեմ զկոյսդ մաքրական
Տալ սպեղանիս հոգոյս դարման

Եւ զանուղղագործ զազրական,
Որ զՍոդոմ արար կործան
Տնկեաց ի միս գոլ բնական
Տանջել նովիմբ անեզրական

Փարեալ զոտիցդ անապական,
Խնդրեմ զդեղ հոգոյս խոցման
Կաթիլ միայն քո կուսութեան
Ինձ փրկութեան ի բաւական

Ախտից մեղաց զիս օթևարան
Արար տեղի և կալարան,
Եօթնից չարեաց հոգոյ մաճուան
Սպանեալ զանձինըս կրկնական

Նոր փառութեամբ հպարտական
Եւ նախանձու հոգոյս այրման
Եւ բարկութեամբ զայրացան
Եղէ ես չար քան զգազան

Ո՛վ տիրամայր անապական,
Առիթ կենաց ինձ փրկութեան,
Զերիս չարիս հոգոյս յանցման
Քաւեա քո սուրբ որդոյդ արեամբ·

Սոյնպէս զմարմնոյս մասունս մահուան
Զորից կերպիցն եղէ դարան,
Ծոյլ ի բարիսն յամառութեամբ
Ագահորկոր պողընկսկան

Մատիր յաղերս, կոյս Մարիամ,
Առ ծնեալդ ի քէն աստուածըն բան,
Տալ ապեղաւիս եօթեանց յանցման
Հոգոյս, մարմնոյս որ գործեցան

Երես ի վայր կամ ի յանկման,
Թլուով լցեալ է Յոբեան,
Ըստ այսմ ճաւիս որ զըրացան
Հոլով յաւարտ կատարեցան

Ղօղեալ մեղօքս գոլ ի սուգման
Գնամ յատակս կորընտեան,
Ջմայրդ կենաց իմ յարուցման,
Հայցեմ լինել ինձ օգնական

Առնել հնար ինձ վերածման
Ի խոր մեղացս, որ կամ թաղման
Տալով հիքոյս ուժիտ փրկան,
Զյոյս միածնիդ ազատութեան

Ի խսեալ բանիս հառաչական
Զկոյսդ աղաչեմ սրտիս բաղձմամբ,
Վասն ճառիս նախնոյ շարման
Տամբք հարիւրից գոլ ի լրման

Որոյ րաբուն Ներսէս անուն
Առիթ գոլով յառաջագոյն,
Յերուսաղէմ խնդրեալ նորուն
Տունրս հարիւր յարեաց ընդ նոյն

Բոտմամբ սիրոյ սրբոյ կուսիդ
Յաղթեալ անգա ի խոյզ բանիս,
Կազմել թոշակ հոգւոյս-վիրիս
Լոկ ի յանունս գոլ պսակիս

Սիրով քոյին ծնող բանին
Յայնեալ եղի ընդ նախնի ճառին,
Տունս հինգ յիսուն աւելորդին
Հոգոյն շնորհիւ յարեալ ի նմին

Այժմ դարձեալ ընդ նոյն շաւղին
Երգս երգեցից մօրդ անեղին,
Քեզ պատմաբանս ըստ այբուբենին
Ինձ ողբ և ձայնս լալագին:

Աստուած հանուրց գոյականին,
Հայր անսկիզբն և անքննին
Խորհեալ ընդ անեղ իւր ծոցածինն
'Ի ընդ կիտակից աստուած հոգին՝

Բան նորասքանչ զարմանալի,
Որ չէր եղեալ բնաւ յերկրի,
Զի արարիչն ամենայնի
Զգենու մարմին հողեղինի

«Գրնա,— ասէ Գաբրիէլին,—
Տուր զաւետիս սրբոյ կուսին,
Թէ գայ աստուած բանն անմարմին,
Ծնանի ի քէն անճառելին»

Դասուք վերնոց հրեղէն գնդին
Հոգին աստուած անզննելին,
Ծաչմամբ անեղ և մեղմագին
Էկաւորի առ սրբուհին

Ու ընդ ասել Գաբրիէլին
«Քեզ հովանի է սուրբ Հոգին»,
Նոյնժամ մտեալ աստուած հոգին,
Տեղ պատրաստեաց յուր էակցին

Զայնմ սպանու ծիսուա որդին
Բնաւորեցաւ յարգանդ կուսին
Եւ ձևացոյց իւրն մարմին
Միտք և հոգի բանաւականին

Էր ի յերկինս յոլորովին
Ընդ հօր հոգով ի յաթոռին,
Նոյն և բոլորն առ սրբուհին
Բովանդակեալ յորովայնին

Ընտրեալն յառաջ իւրն տեղի
Քան զլինելն արարածի,
Ի մարդկային ազգէ սեռի
Զկոյսն հաճեալ օթագայի

Թագ պարծանաց հողեղենի,
Բարձր աշտանակ եօթնալուսի,
Ջխաւար հոգիս լիմ զազրալի
Լուսաւորեա, կոյս սրբուհի·

Ժառանգ կենաց մօրն Եւայի,
Րդք և գտաւ զնախանի տեղի,
Լեր յոյս և ինձ ապաւինի,
Զանընեալս կանգնել անդրդուելի

Ի սուրբ յարգանդ քո և մաքուր
Օրարեալ կրեցեր զանատանելին,
Հայցեա յորդոյդ քո անքննին՝
Տալ օթևան ինձ յադենին

Լրութեամբ ամսոց չորս և հնգին,
Այլ աւուրքք չորեակ և միճ,
Զհուրն աստո ծոյ բարձեր յանձին
Եւ ոչ կիզար լոցով ճորին

Խանդաղատեալ ալրմամբ սրտիւ
Ցայտեմ զիղձս սղէտիս,
Որ թաւալեալս եմ ի տղմիս
Անբաւ չարեօքս, որ կայ ի յիս

Ծուռ կրկնեա առ տէր վասն իմ
Ծառդ անթառամ կենաց պտղին,
Տալով ինձ կեանս առ ի բարին
Ազատ լինել յանհուն պարտին

Կառք տէրութեան անմահ բանին
Եւ գերագոյն քերովբէին,
Բարձ ի հոգոյս գանտանելին
Ջախտս մեղաց զազրագունին

Հոյլք հրեղինաց ոչ իշխին
Հպիլ գոնեա աղօտագին,
Կրեցեր յարգանդ քո կուսածին,
Զայն որ սարսեն դասք սրովբէին

Զայնըն առետեաց աստուածայիւ
Հնչեալ ազդմամբ առ քո հոգին,
Հայցեա և ինձ լսել ձայնին
Զեկայք օրհնել յօրըն վերչին

Ղամբար վատեալ ջահ արփենին
Գգուեալ բարձեր զլոյսն անքննին,
Կառո և զիս յոտըս խաչին
Յահեղ աւուր դատաստանին

Ճար և հնար մարդկան սեռին
Եղեր, սուրբ կոյս Աստուածածին,
Լեր և գերոյս հոգով ախտին
Փրկե յանշէջ հրոյ գեհենին

Մաքրեա զխանգանսն [illegible]
Զանձեռս աչաց անթըրեկին,
Զզորութիւն ճոգոյս տատին
Զմտացս խորհուրդս գոլ ի չարին

Յարփոյն վառեալ անշիջելի,
Կայծ, կարկեհան, գեղ հրաշալի,
Զդիմեալն ի մայրդ սուրբ միածնի
Խնդրեա ազատ լինել յոգի

Նոր նորոգօղ մարդկան ազգի,
Կոյս Տալիթայ, խորան լուսի,
Հա՛ն ի ճոգոյս զաղտ զազրալի,
Զփտեալս մեղօք դառնագունի

Ծնորհաց ճոգոյն ընդունարան,
Տուն Քրիստոսի գոլ օթևան,
Բարձեր ի գիրկ զանման արքայն,
Որ Ն մեզ կեանս և օգնական

Ուստի գերեալս թշուառական,
Նշդեհացեալս թափառական,
Զքեզ ունիմ յոյս և վահան՝
Առ ծնեալ որդիդ քո տիրական

Զքնաղ, աճեղ, զարմանալի,
Մայր անարատ 'Մանուէլի,
Զատածողն էիցս ամենայնի
Կաթն արբուցեալ քում ստենի

Պարպատելոյս չարակրութեամբ,
Որկորամոլ ագահութեամբ,
Սուրբ և անաղտ քո մաքրութեամբ
Ջիս ազատեա արիութեամբ

Ջուր կենդանի անապական
Լուացեր զհոտեալ շարաւ մարդկան,
Զգարշ այտեղիս շուայլութեամբ
Մաքրեա քո սուրբ որդոյդ արեամբ

Ռահ լուսոյ եդեմական,
Որով մարդիկք յերկինս ելան,
Որով և ես կամ և յուսամ
Քև աչք լիք եւ ի դատաստան

Սասանելոյս յարկն շնորհին
Մօր իմ հոգոյ աւազանին,
Ի զանազան մեղս երկրային
Լքի զշնորհս մեծ խորհրդին

Վերաբերեա դարձեալ կրկին
Զանկեալ հոգիս յանէլ բանտին,
Քո հայցուածովդ քաղցրագին,
Ջի համարձակ ես քո յորդին

Տերըն փառաց աստուածորդին
Սնանի առ քեզ ամս երեսնին,
Յետ այնորին ի Յորդանան
Գայ, մկրտի առ ամլորդին

Բամեալ ընդ նոյն Երից ամիւ
Կատարելով զտնօրէնութիւն,
Գայ կամաւ հօր ի մահ խաչիւ
Առ ի բառնալ զմեղս մարդկային

Ցուցեալ զգութ սիրոյ քոյին
Իմ կեանքն և յոյսն առ ի խաչին,
Յանձնէ զքեզ առ Յովհաննին
Կոյսդ ի կուսէն պահպանիցին

Ի խուեալ ընդ նոյն հրաշս կրկին
Ի յարութեան աւուր մեծին,
Ջօրս քառասուն միշտ երևի
Օրհնէ, սլանայ յերկինս երկնի

Փառօք բազմօք Նկատրի
Յերկուտասան լրումն ամի,
Յետ համբարձման իւրոյ մեծի
Առեալ զքեզ վեր նա յերկնի

Քանոն կատար եղև ճառիս
Ծնորհիւ սրբոյ Աստուածածնիդ,
Փա՜ռք և պատիւ երրեակ անձին
Հօր և Որդոյ, Հոգոյ շնորհին

Ո՜վ գերահրաշ ալփիացեալ,
Որ յանմարմնոց ես ներբողեալ
Գերամաքուր ջահաւորեալ
Կոյս տիրածին, ամէնօրհնեալ

Ղեկօք դրուաւ պատշաճավոր
Ով ոք գովէ զքեզ յանկաւոր,
Որ երկնալնոց ես ըղձաւոր
Եւ գերագոյն բաղդատաւոր

Ոչ ոք յէիցըս մարդկային
Ճառել իշիւէ գխորհուրդ քոյին
Ոչ աննմարմին, ոչ երկրածին,
Բայց թէ որդիտ քո միածին

Րոտեալ արտիւ ես թախծագին
Անգա ի յիղձըս փափագին,
Ոչ գիտելով ըստ պատշաճին
Յարել ի մի ոտն առ ոտին

Մաղթեմ ի քէն, խորան բանին,
Թողուլ զպարտիս իմ բազմագին,
Զի ոչ զարժանն ըստ քո անձին
Երգեալ ետու զներբողինին

Ես փանաքի գոլով անձին
Չեմ արժանի այսր մասին,
Թէպէտ անուանս բոլոր կոչին
Պսակ և տեառ Ստեփանոսին,

Այլ այս թըւիս որ յառաջեալ
Եւ բան զբան գոլով ծնեալ,
Նախ միմ հարիւր Նեռսէս ոգեալ,
Որ պըւէտ Մոկեաց մակձայնացեալ

Ետ այմ և մեր վստահացեալ
Բաւ ի բանից գոլ կըցկցեալ,
Երից հարիւրց մակագրեցեալ,
Համայնն չորիք բովանդակեալ

Փառս տացուք հօր աներին
Եւ միածին բանի նորին,
Հոգոյն սրբոյ զարդարողին,
Որ ազատեաց զմեզ վերըստին

8. ԱՂՕԹՔ ԱՌԱՆՁՆԱԿԻ ՍՐՏԱՀԱՌԱՉ ՁԱՅՆԻՒ ՊԱՂԱՏԱՆՕՔ ԱՐԱՐԵԱԼ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ Ի ԼԻՄ ԱՆԱՊԱՏՆ

Բարերար աստուած, մարդասէր,
Ողորմեա ինձ, բազմամեղիս,
Ներող, գթած, օրհնեալ և երկայնամիտ,
Գթա՛ ի տառապեալ գերիս
Եւ արձակեա ի կապանաց վտանգիս
Բարեխօսութեամբ ամենայն սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց,
Բարեխօսութեամբ հրեշտակաց և հրեշտակապետացն,
Աթոռոցն դասուց, սերովբէից, քերովբէից,
Տէրութեանց, զօրութեանց, իշխանութեանց, պետութեանց,
Հրեշտակապետացն և հրեշտակացն
Բարեխօսութեամբ նախահարցն

Յդամայ, Աբելի, Սեթաւ, Ենովսայ, Ենովքայ,
Նոյի, Մելքիսեդեկի,
Յբրահամու, Սահակայ, Յակոբայ, Յովսեփայ,
Յորայ ճաճապետին, Մովսէսի մարգարէին, Ահարոնի քահանային,
Յեսուայ, Եղիազարու քահանային,
Փենեհէզի և Սամուելի
Յիշատակաւ և աղօթիւք Դավթի մարգարէին,
Եղիայի, Եղիսէի, Եզեկիելի և Ովսեայ բարեպաշտից,
Եսայեա, Երեմիայի, Եզեկիելի և Դանիելի
Բարեխօսութեամբ երկոտասան մարգարէիցն՝
Ովսէի, Ամովսայ, Միքիայ, Յովելեայ,
Աբդիու, Յովնանու, Նաւումայ, Ամբակումայ,
Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ
Բարեխօսութեամբ Եզրասայ դպրին,
Եղիազարու քահանային,
Շամունի և եօթ որդոցն իւրոց.
Յիշատակաւ և աղօթիւք երկոտասան առաքելոցն և եօթանասուներկու ընտրելոց աշակերտացն,
Արեամբ ներկեալ մարտիրոսացն
Եւ ճգնաւորացն, կուսանացն, միանձանցն
Եւ ամենայն հայրապետացն սրբոց
Եւ վարդապետացն առաջնոց
Բարեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին
Եւ Յովհաննու Կարապետին,
Ստեփաննոսի նախավկային
Եւ սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին
Յիշատակաւ և աղօթիւք սրբոցս այս ամենայն
Նայեա ի սպատկեր վշտացս դառնութեան,

Բազմավտանգ կրիցս կարեացս կցդրդակիցս յեր բժշկապէս
Եւ փարատեա զցաւս հոգեկան խիթմանս,
Աստուած իմ և տէր իմ,
Լոյս, կեանք,
Նորոգող, փրկօղ և կեցուցիչ
Եւ քեզ փա՞ռք յաւիտեանս, ամէն



ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՏԱՂ ԵՒ ՊԱՐԵԱՆՔ ԵՐԿՆԻՑ ԵՒ ԳԵՏՆԻՑ

1

Երկինք և գետինք եղբարք,
Տեսուք, թէ ո՞րն է աւելի
Յերկնից աստղերն շատ է,
Եւ գետնի պտուղն աւելի

Երկինքն ընդ գետինն ասաց
— Ես քեզի համալ մի արի
Որտեղ կտրիճ մարդ մեռնի,
Գայ ի քո ներքևդ արգիլի

Գետինն ընդ երկինքն ասաց
— Այդ բանիդ միանգէթ մի չուգիմ,
Հոգին ալվի դու կառնուս,
Մարմինն ես չառնում կու ձօտի

Երկինքն ընդ գետինն ասաց
— Ես քեզի համալ մի արի.

Տարի մի աւձրև չի տամ
Քո կանանչն ամէն չորանայ

Գետինն ընդ երկինքն ասաց
— Այդ բանիդ մուննէթ մի չունիմ.
Ծովն այլ սրտէս կու բխայ,
Գետ, զաղբիւր ի մէջ լեռներուս.

Երկինքն ընդ գետինն ասաց
— Ես աթոռ եմ աստուածութեան,
Հրեշտակք և հրեշտակապետք,
Սէրօբէք և ընդ քերօբէք

Գետինն ընդ երկինքն ասաց
— Իմ տէրն ինձ խոնարհեցաւ,
Ես նորա կարօտ էի,
Եկաւ իմ սիրտս թաղեցաւ

Գետինն ընդ երկինքն ասաց.
— Մեղա յ քեզ, նղբայր իմ, մեղա
Ես քեզ խօրաթայ արի,
Դու ես մեծ քան զիս գովելի

2

Երկինքն ի գետին նղբարք,
Թ ապամ որ զօրն կու տանի
Երկնից ցօղն շատ կաւեն,
Բայց գետնին պտուղն աւելի

Երկինքն ի գետին ասաց,
Թէ ինչով ես ինձ նմանի
Ես գիմ ցօղս վիս քաշեմ,
Բիւր հազար ծաղկունք թոռոմի

Գետին ի երկինքն ասաց,
Թէ զատոր խամն իսկի չունիմ
Ատ ցօղն, որ ի քէն կիչնու,
Նայ իսնէ ի քեզ կո ւիոխի

Երկինք ի գետին ասաց,
Թէ ինչով ես ինձ նմանի
Ես քեզ հանց զձուն դնեմ,
Որ արևն ի քեզ չի դիպի

Գետին ի երկինք ասաց,
Թէ զատոր խամն իսկի չունիմ
Անդրնդոց բանդ եմ,
Որ գարնան գոլն զքեզ տանի

Երկինքն ի գետին ասաց,
Թէ ինչով ես ինձ նմանի
Ես քեզ ամբ ու շող անեմ,
Որտեղ ծառ կանաչ չոր լինի

Գետին ի երկինք ասաց,
Թէ զատոր խամն իսկի չունիմ
Ես ակներուն հրամանք տամ,
Գետ էլ ու աղբիւրն աելի

Երկինքն ի գետին ասաց,
Թէ ինչով ես ինձ նմանի
Որտեղ չանայժան մարդ կա՝
Վերայ քեզ կոխէ ու անցնի

Գետին ի երկինք ասաց,
Թէ զատոր խամն իսկի չունիմ.
Որտեղ սիրօ տէր մեռնի
Յիս չառնում, Լգուց կու ծօտի

Երկինքն ի գետին ասաց,
Ջէնի հար, չեմ քեզ նմանի
Շատ հաց սեղանի ես դու,
Գերեզման շատ վարդապետի

Գետին ի երկինք ասաց,
Ջէնի հար, չեմ քեզ նմանի
Լ րկնից ու գետնից ըսաեղծօղև
Վէրայ քեզ բազիլ կու նայի

3

Փառըս տացուք ըստեղծողին,
Որ խնամող Ի ամենայնի,
Ջի տայ ծառայից իւրոց,
Ջոր խնդրեն և միշտ ըզբարի
Թէ պէտ ծուլացեալ կենամք
Եւ ատեմք ըզգործըս բարի,

Գըթած, ողորմած ես, տէ՛ր,
Մի՛ մատներ զմեզ ի չարի
Կամիմ, որ գովանք մ'ասեմ
Հրաշալի սուրբ յանապատիս,
Որ է բնակարան սրբոց
Հրեշտակաց յուժ փափաքելի
Քաւիչ է մեղաւորաց
Եւ փրկիչ է չար վտանգի,
Ով որ ճանդիպի սմա
Լ րանէ՝ աստ բընակողի
Աղաչեմ և խնդրեմ ի քէն,
Հայր որբոց ու այրեաց տըկարի,
Տուր ինձ զօրութիւն այժմուս,
Որ մարտիմ ընդ չար խոյճրդի
Զի եմ շաղախեալ նովաւ,
Սխտացեալ եմ չար ճընարի
Օգնութիւն ի քէն խնդրեմ,
Սուրբ Գէւ ըգ, զինուոր Քրիստոսի
Լմայ անապատ ասեն
Յայս կըզիս, որ է գովելի
Զի որք բնակին ի սմայ
Քրիստոսի լինին սիրելի
Լ ազում Էղբարք կան բնակեալ
Քառասուն և այլ աւելի
Ոմանք բաժանեալ ընչից
Եւ խնդրեն ըզկեանս յաւիտենի
Փա՛ռք քեզ, բարերար աստուած,

Քո ամէն բանդ է սքանչելի
Որ ես պարգևեալ մեզի
Սուրբ տաճարս ի մէջ ի ծովի
Որ է ճեռացեալ մեղաց
Եւ փրկիչ ի մարմնոյ չարի
Ոչ գող կարէ մերձենար,
Ոչ այլազգեաց ոտից հանդիպի
Բերդ է հոգևոր ճարանց,
Զրեղէն պարիսպ ինքն ունի
Ով որ ճառատով խնդրէ
Սատանի ձեռաց զերծանի
Օգնութիւն ի քէն լիցի,
Բարերար աստուած ամենի,
Տուր մեզ զօրութիւն այժմուս,
Որ օրհնեմք զօր ճանապազ
Սուրբ զանունդ ի մէջ գիշերի
Որպէս որ գովեն զդա
Գովելոյ ունի սա տեղի
Խիստ անգէտ, յիմար եմ ես
Եւ չունիմ շնորհք ի մտի
Սակաւ մի կարճ ի կարճոյ
Ասացի ես քան մի քանի,
Աստուած ողորմի եղբարց
Եւ պահէ անփորձ ի մայմնի
Վա՜յ ինձ, մեղաւոր անձին,
Որ անթիւ չարեօք է ի լի
Կարող չեմ պատմել լեզուովս,

Ինչ ասեմ, որ չէ յիշելի
Է քննօղ գաղտնեաց աստուած,
Դու գիտես զամենն յայտնի
Սղաչեմ, խնդրեմ ի քէն
Իմ մեղաց գիրըն ջնջևացի
Անջիկ մ է սորա շինողն
Ի յազգէն սուրբ հայրապետի,
Որ է քոնութեամբ առեալ
Կնութիւն զնա տաճիկ ազգի
Պարտ է աղօթիւք յիշել,
Որ նորա աստուած ողորմի
Այս է պատուիրան փրկչին
Միմեանց խնդրել զբարի
Զի ոչ գոյ նման ամայ
Ի վերայ արարած երկրի
Նման է յԱդին դրախտին
Ադամայ մեր հօրըն նախնի
Լի է գոյնզգոյն ծաղկով,
Սուրբ հարանց խրատն ի միջի,
Ով ոք ունկնդիր լինի
Զօրանայ հոգւովն ի մարմնի
Սորա զարդարողքն ասեմ՝
Նո երկու լուսաւոր հոգի,
Որ մինն Ներսէս կոչեն
Եւ միւսոյն Ստեփաննոսի
Բազում աշխատանք ունին
Յիշատակ ըզկնաչն փրկչի,

Նոցին քարեխօսութեամբ
Տէր աստուած մեզ ողորմեսցի
Ի սմայ քնակեալ եղբարքս
Ժողովեալ են չորից կողմի,
Ոմանք ի յարևելուց
Եւ ոմանք ի հարաւայի
Ոմանք հիւսիսոյ եկեալ
Եւ ես ի յարևմտից
Մեղաւոր Սարգիս Քլիսցի
Տէր աստուած, տաս համբերութիւն,
Մեր մահուն օրն աստ կատարի

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Ա.

Աբբա — վանական, կրոնավոր

Ալէլույիա — օրհնություն, գովություն, օրհնեցեք աստծուն կամ գովեցէք տիրոջը

Ախտաժետք — ախտագյալ, ցավագար հիվանդ, հիվանդոտ

Ակումբ — ժողով ուրախության կամ սգո խումբ հանդիսական, բազմություն բոլորյալ

Ձճափ — արդյոք

Ամոլական — լծորդ, լծակից գույգ արջառները, որոնք նույն լուծն են ձգում, կամ գույգ ձիերը, որոնք լծված են նույն կառքին ալև ճամառությամբ էլ երկու գործակից անձեր, այսպէս կոչում էին Պետրոսին և Պողոսին

Այպանել — ծաղրել, անարգել, արհամարհել

Այսահար — դիվահար, անմաքուր ախտացյալ

Անագաճել — հապաղել դանդաղել

Անեղ — ինքնագո, աստված

Անթարթափ — անքթիթ անթարթելի թարթում և լրթափում չունեցող աճշարժ

Անոպա — կոպիտ խակաբարո, անմիտ անամոթ, աշնորհք վայրենի

Անպարզական — պարզություն չունեցող, բարդ

Անտուտ (անդուտ) — այնտեղից այն վայրից այն կողմից

Անքակ — անլուծելի անլաժանելի

Անքատակ — անհատազատ

Աշխար — կոծ, ողբ, լաց ճիչ կական, սուգ, ցավ

Առանձնական — միայնացյալ մնակեցակաւր, միանձնական
Առապար — քարոտ, ապառաժոտ, անհարթ խորդուբորդ
Արհաւրաւորք — զարհուրանք
Արհիական — արքեպիսկոպոսական

Բ

Բաղխոհական — տրամաբաշխական բաշխիչ և սփռիչ, որոշիչ
Բառնալ — վերացնել
Խարելի — բարիքներով լի
Բորոտ — բոր ախվանդություն ունեցող ուրուկ
Իրաքիոն — հաղթանակ, մրցանակ, վարձ հաղթության, պսակ, արմավենի, ձիթենի, դափնի, ծաղիկ անթառամ
Բրինձ — իշխան

Գ

Գայռագեղ — վանդակ երկաթի, արգելարան գազանների
Գերակա — ծայրագույն, գերագույն, գերազարձ
Գերակաւար — կատարյալ, գերազանց, վեհագույն քան, առավել քան
Գերասահճանք — գերագույն աստիճանի, բարձրագույն
Գինի — խոնավ, ցաւկաւներ
Գիշահանձք (գիշախանձք) — գիշակեր
Գղերիկոս (կղերիկոս) — վիճակավոր ժառանգավոր եկեղեցու
Գոռնեա — գեթ
Գրգել — փայփայել, գիրգ և փափուկ պահել
Գուբ — փոս

Դ

Դափր — ձիու կողմից ոտքերով գետնին խփելն ու փորելը
Դեհ — կողմ
Դերբուկ — քարոտ, խորդուբորդ վայր ապառաժ դար ու փուս վայր
Գիւաւ — ատյան
Դսահիկոն — եռահարկ, երրորդ հարկ, վերնատուն վերնահարկ

Ե

մ (աղին) — դրախտ
րանք — պարսավել, անգոսնել

Զ

նիշան — ոսկի նշան
ել — փողոտել խողխողել, սպանել
բար ալահն — մեծն աստված

Ը

աբոյս — նրա հետ բուսած, ւնից ընկած, բնածին ընտանի

Թ

ից — ընդունելություն
ակե — դեղ կամ դեղարակի պատրաստված օձի կամ այլ գե ռունների մարմնից
ակ — վարձ, մեղքերի թոշակ նշանակում է մահ, սնունդ, պարեն, պաշար
արան — առագաստանավում եռանկյունի առագաստը նավի աջ կողմում, ընդունարան թռչելու նմանությամբ. որպես հողմալից առագաստը

Ժ

ւլ — հանդգնել ժպրհել, չամաչել անամոթել իշխել
Ժկալ — տոկուն, համբերող, արի, քաջ, դիմացկուն, զգաստ, ողջախոհ

Ի

— գազան գիշակեր մոխրագույն խալերով լեոպարդ

Լ

Լալ — պատվական քար, սապֆիր
Լասաափայտ — փայտից կազմված ճավանձև լատ, հատկապես ավանդական Նոյի տապանը
Լուցեալ — վառված

Խ

Խամ — անմշակ անտեղյակ
Խայրին — պտուղ, բերք արդյունք, արգասիք, ընծա հաճոյական
Խաչաբարձ — կրոնավոր
Խանդակաթ — ղողձակաթ կարոտագին
Խաւարչուտ — խավարին, խավարային, մթին
Խեճեշանալ — մեղկանալ ցոփանալ, զեխանալ
Խըշըրի — փշրվի
Խիթումն — կասկած, երկբայություն խղճի խայթ
Խլա (խիլա) — ձորա ազնիվ մեծագին հանդերձ
Խօրաթա — զրուցել խոսել

Ծ

Ծիւրեցա (ծիւրեցուցանել) — Բալումաշ լինել հյուծվել նիհարել

Կ

Կալեալ — րոնված
Կաճառախումբ — հանդես, ատյան համախմբություն
Կարկառակոյտ — քարերի կույտ
Կարկեհան — ակ սլատվական, հրագույն սուտակ
Կարկամ — ժլատ, կծծի, կամարյալ, ոլորյալ
Կարկիչ — կասեցնող դադարեցնող
Կայթել — խփել ձեռքով և ոտքով դոփել ոտքերով ոստոստել ուրա խությունից, ծափել, խայտալ
Կենդանագիր — նկարված պատկեր, նմանություն սկզբնատիպին

Նեփազու (կնփազյա) — ոսկի ազնիվ տեսակի
Կղեալ — կծկվել
Կմբէթ — գմբեթ
Կնկուղ (կնգուղ) — գլխարկ մեծ, վեղար ճգնավորական

Հ

Համալ — հմայիլ, ամուլետ
Հանգուցանել — դնել տալ, հանգչել
Հաւատոր — միանձնուհի
Հերձուած — երկպառակություն, անմիաբանություն, տարաձայնություն
Հնձանահար — հնձանում կոխկրտված, հնձանում խաղողը ոտքերով ճմլող
Հօտապնա — պետ հոտի, հովիվ հոլվապետ առաջնորդ եկեղեցու

Ղ

Ղդուս — սուրբ
Ղօղեալ — թաքնվել

Ճ

Ճգունք — ջանք, ուժերի լարում

Մ

Մակձայնացեալ — մի անունով կոչել նոր անուն դնել մականվանել
Մածմունք — կցում պնդում
Մածնում — թանձրանալ, մակարդվել, պնդել, կցվել
Մամոնա — ինչք, մեծություն, մանավանդ ծողովված անիրավությամբ և վաշխով
Մանանա — գնձի սերմի նման սպիտակ տեսքը սառույցի նման. Մեղրահամ սպիտակ նյութ, որ ամեն առավոտ առատությամբ իջնում էր Սինա անապատում և որով, ըստ Հին կտակարանի ավանդության, կերակրվում էին թափառական իսրայելցիները գազպե

Մանանեխ — փոքրիկ բույս, որ աճում է որպես ծառ, նրա անունով կոչվում է և նրա սերմը որը խիստ կծու է, համեմունք մարսեցուցիչ

Մարդախոշոշ — մարդասպան, արյունահեղ, արյունարբու

Մարախրոս — վկա, նահատակ

Մէհրապ (մէհրաբ) — մզկիթի ճակատին գտնված խորշ, որը համապատասխանում է հայկական եկեղեցու սեղանին, ընդհանրապես խորշ պատի մեջ

Միեղջերու — առասպելական կենդանի, որ ճակատին ունի մի եղջյուր, նման է եղջերուի, ձիու, վարազի ուղտի ծիրանագույն կառափի վրա ունեցել է մի երկար և սուր եղջյուր ապրելիս է եղել Աֆրիկայում Արաբիայում և Հնդկաստանում, և որին այլ կերպ չէին կարողանում բռնել քան մի կույս աղջիկ դնելով նրա որջի մեջ ռնգեղջյուր

Մոլար — մոլորեցուցիչ, խաբէբա պատրիչ սխալ վրիպակ, սուտ

Մոխրասեսակ — մոխրի տեսք ունեցող, մոխրագույն սևերես

Մորի (մորեաց) — գազանների որջ մայրիների մեջ, որտեղ կորյունները մոր հետ են կաղաղ դադարք

Մսիա (Զ նսիա) — մեսիա Քրիստոս

Մունետիկ (մունետիկ) — երախտիք, անտեղի հիշատակություն իր արած լավության մասին որ անհաճո է լավությունը ստացողի համար, նրան մի տեսակ պարտավորցնում է, ճնշում

Մուրա — տունկ կամ թուփ մանրատերև, մշտականաչ, անուշահոտ

Մօր — տիղմ ցեխ, ճահիճ վայր աղտեղոտ

Յ

Յապաւեմ — խուզել, հատանել, կտրել, մաքրել

Յասպիս — խիտ կվարց ակարի ցեղից, գորշ կարմիր, դեղին կամ կանաչ, թանկարժեք շատ գեղեցիկ քար, որ գործ է ածվում իբրև զարդ

Յարուցումն — գետերի բարձրանալը

Յեռում — շարահարել, հարմարել, հարդարել, ընդելուզանել

Յոլով — ծողով բազում շատ հաճախ մեծ մասն

Ն

Նսեմական — աղոտ, մթին, ստվերամած, խավարային

Շ

Շահաստան — մեծ քաղաք, թագավորանիստ կամ նահանգի կենտրոնական քաղաք, ինչպես նաև մեծ առևտուր ունեցող քաղաք

Շաղաշար — շարակից, հարակից, զոդված, միացյալ

Շափյուղա — պատվական քար երկնագույն, ծիրանագույն կամ դեղին գույն ոսկի երանգներով

Շեխզադա — շեյխի որդի

Պ

Պայազատ — հաջորդ փոխանորդ, մանավանդ ազատի կամ թագավորի, սեփական ժառանգ և մնացորդ ազգի

Պատրումն — պատրանք

Պարագրել — շուրջ պատել, շրջափակել, պարփակել, նկարագրել ուրագրել, դրոշմել

Պարակցություն — պարակից լինել, դասակցություն

Պարանցիկք — անցումը պարողների շարքը պար

Պօէտ (պոետ) — բանաստեղծ քերթող չափաբան, բանահյուս

Ջ

Ջամբեալ (ջամբող) — ջամբ տալով դարմանել, տալ ուտել պատառ պատառ կերակրել, արբուցանել, մատակարարել կերակրող և սնուցանող մատակարարող տվող

Ռ

Ռաբբի (ռաբի) — վարդապետ կամ տէր

Ս

Սաղաձքն — զրահի մասեր
Սարտուցեալ — խրտնել, սարսափով ի բաց վազել
Սեղանաւոնգ — դավաճան ընդդեմ հացին
Սերովբէ (սրովբէ) — կիզանող վառյալ, վերին դաս հրեշտակների առաջին կամ երկրորդ կարգի, վեց թևերով որոնցից մի զույգով ծածկում էին երեսները, մի զույգով ոտները և մի զույգով թռչում կանգնում էին աստծու աթոռի առաջ սպասավորության համար
Սնակուշտ — կշտի դատարկ և աՐոսկր մասը մեջքի կամ կողի, որտեղ ոսկոր չկա թլակուշտ

Վ

Վարկանիմ (վարկա) — համարել, հաշվել կարծել, դատել
Վարշամակ — թաշկինակ որից գլխին գցելու կտավ խույր ապարոշ, քող
Վիրգ — քարկոծելու համար նետված քար պիրկ ձգումով բռՆաքար, ռմբաքար

Տ

Տղմասուգ — տղմախառն
Տպագիռն — պատկերակ քար հրագույն

Ր

Րաբունի — պետ իմ, վարդապետ իմ, տեր իմ, աստված իմ
Րոպումն — որոտումն դղրդյուն, դող կամ տրոփ սրտի

Ու

Ուղէշ — շառավիղ ժարունակ, ընձյուղ ժողոլոջ, ուռ ալքից

Ունար — կտավ երկար կամ պատառակ փայթաթելի որպես պես պես գույներով և զարդարանքներով գցած աշխատանքի մարդկանց վրա, եկեղեցականների ուսով, կանանց գլխով և մեջքով

Փ

Փանաքի — չնչին նվաստ անարգ աղքատ տկար տրուպ, կոխող հետին

Փեղամբար — մարգարե

Փերևեթեցա (փերևերտում) — պճնվելը սիգալը

Փիլոն — վերարկու, կրկնոց, աղաբողոն

Փողսալ — խողխողել խոշոշել, զոհել գլխատել, խեղդել

Ք

Քաղցրասիգ — քաղցրաշունչ, քաղցր սյուք ունեցող

Քամահել — արհամարհել, անարգանքով անտես առնել

Քանոն — օրինակ ուղղության, տիպ սահման, կարգ, չափ

Քանքար — շնորհք, ձիրք, երևելի կշիռ ոսկու կամ արծաթի

Քառամանեակ — վզի զարդ, չորս կողմանի աղյուսանման ոսկուց և արծաթից

Քեղի — ղեկի վերին մասը ղեկավարի ձեռքին

Քերովբե (քերուբե) — վերին դաս հրեշտակների քառաթև կազմյալ հրացայտ

Քթթել — թարթափել, թարթել աչքերը

Քղանցք — դրոշակ տուտն, ծոպ, հանդերձի ծայրը, փեշ

Քող (քուղ) — փշոտ ցավագին պատժապարտներին հարվածելու համար

Քսումն (քուք) — ծուփք անխոխումն շփոթ, հեծություն, վիշտ և [illegible]ղություն

Օ

Օթագայեմ — իջևանել որևէ տեղ ճանապարհին հարկի տակ կամ բաց օթյա դադարել լուծանել, հանգչել որևէ տեղ միառժամանակ

Ֆ

Ֆրէր — եղբայր
Ֆրղաց — ղուրան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծութիւններ

Ներսէս Մոկացի

1 **Վիճաբանութիւն երկնի և երկրի** — Երկինքն ու գետինքն եղէ արդ

2 **Ներբողեան գովեստի չորեցունց արանցն որք եղեն ակիզբն անապատի կարգիլ յազգս մեր** — Օրհնեալ տէր Յիսուս փրկիչ

3 **Գանձ նոր նահատակին և սուրբ քահանային Անդրէասի Նախճաւանցւոյ, որ կատարեցաւ ի Շահ-Աբասէն ասացեալ շնորհալի վարդապետին Բեղլու Ներսէս կոչեցեալ Մոկացի** — Հաստ անմահական

4 Եկայք նորազուարճ մանկունք Եկեղեցոյ

5 **Նորին Ներսէսի Մոկացւոյ ասացեալ ողբերգական** — Մանուկ մռավարժ էի

6 **Ողբ վասն առմանն Երուսաղէմի** — Ի հոլովել ժամանակին

7 **Ներբողեան վիպասանական ի փոխումն Աստուածածին** կուսին և յաղագս պատկերին սրբոյ, որ բերեալ հանգուցաւ տեսչութեամբ հոգւոյն ի սահմանս Անձեւացեաց, ի տեղին կոչեցեալ Հոգոց վանք — Աստուած և տէրն ամենայնի 7

8 **Աղօթք առանձնակի սրտահատաչ ձայնիւ պաղատանօք** արարեալ **Ներսէս վարդապետի ի Լիմ անապատն** — Բարերար աստուած, մարդասէր 143

Հավելվածներ

1 **Տաղ և պարծանք երկնից և գետնից** — Երկիրք և գետինք եղբարք 146
2 Երկինգ ի գետին եղբարք 147
3 Փառս տացուք ընտեղծողին 149
Ի առարան 154

«Հայ քնարերգություն» մատենաշարի

Ներսես Մոկացի

ՐԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Нерсес Мокаци
СТИХОТВОРЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван 1985

Խմբագիր **Ռ Գ Սարգսյան**
Նկարիչ՝ **Ն Հ Հակոբյան**
Գեղ խմբագիր **Գ Խ Գյուլամիրյան**
Տեխ խմբագիր՝ **Մ Է Ճանճալալյան**
Վերատեսուչ սրբագրիչ **Մ Գ Սահակյան**

ИБ 6116

Հանձնված է շարվածքի 31.05.84 Ստորագրված է տպագրության 24.09.84: Ֆորմատ 70×108¹/₃₂ Թուղթ՝ կավճապատ: Տառատեսակը «Նորք»: Տպագրություն բարձր: 7,35 պայմ. տպ. մամ 14,7 պայմ ներկ. թերթ, 15.8 հրատ. մամ.: Տպաքանակ 20000: Պատվեր 1339: Գինը 90 կոպ

«Սովետական գրող հրատարակչություն, Երևան—9, Տերյան, 91

Издательство «Советакан грох Ереван-9 ул Геряна, 91

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆ կոմբինատ, Երևան—9, Տերյան 91.

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств полиграфии и книжной торговли, Ереван-9, ул. Геряна, 91